

891.995

A-26

H. 9-3

11

BO-437

H a - p m.
3-1218

891.995

1-26

30 MAY 2011

«ԿԱՐՄԻՐ ԺԱՆՆԵՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ Ն 10

ՊԱՏԱՆԻ ԱՐՏԱՍԱՆՈՂ

Կ Ա Ջ Մ Ե Յ Ի Ն

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ, Գ. ՄԵՍՅԱՆ ՅԵՎ ՀՈ. ՊՈՂՈՍՅԱՆ

4518

ՀԱՅ. №

8151-311



Պատ. խմբագիր՝ Ռ. Ա. Գաբարյան
 Տեխ. խմբագիր՝ Գ. Բաբուրյան
 Սրբագրիչ՝
 Գլավ. լիագործ՝ Ա. Ա.—166
 Հանձն. արտրամին՝ 28/III
 Ստորագր. ապագր.—11/VI
 Թղթի ստանդ. ձևը—62X94
 Տիրաժ—2000
 Պատվեր—№ 296.

3986-87

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԲ

Վաղուց է զդացվում նման ժողովածվի պահանջն ու կարիքը, Տարին բոլորում է հեղափոխական տոների շարանով. դպրոցներում, կոլեկտիվներում, ակումբներում ամեն տեղ յերևում է պատանի արտասանողը — մեր պիոները և իր զիլ ձայնը հնչեցնում բեմից:

Գեղարվեստական խոսքն ու արտասանությունը բեմից՝ ամենաուժեղ դաստիարակիչ միջոցներից մեկն է: Մեր պատանի արտասանողը պետք է ձեռքի տակ համապատասխան գեղարվեստական նյութեր ունենա իր հանդեսներին ու հեղափոխական տոներին արտասանելու համար, մինչդեռ նրանք մինչև որս նման նյութեր ընտրել են պատահականորեն: Շարունակ թե՛ դպրոցներում և թե՛ կոլեկտիվներում դանդաղվել են նման նյութերի պակասությունը համար ու դիմել «Կարմիր Ծիլերի» խմբագրության, նյութ խնդրել:

Հատկապես պատանիների համար մինչև որս նման ժողովածու չկա հայերեն լեզվով: Հայպետհրատի հրատարակած «Կարգա-Արտասանիր»-ը կազմված է մեծահասակների համար:

Հաշվի առնելով այս պահանջն ու պակասը՝ «Կարմիր Ծիլեր»-ը ձեռնարկեց ներկա ժողովածվի հրատարակությունը:

Այս ժողովածվում իմի յե հավաքած թե՛ մեր պարբերականներում ցրված և թե՛ այլ հրատարակություններում լույս տեսած մանկական հասակի բնույթ կրող լավագույն նյութերը, վորից, կարծում ենք, մեր պատանի արտասանողը հնարավորություն կունենա իր ընտրությունն անելու:

«ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ»

I

**ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐ**

ՅԵՎ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՈՆԵՐ ՈՒ ԴԵՄՔԵՐ

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յեղիբ, ում կյանքն անիծել է,
Ով ճորտ է, մերկ է և սարուկ,
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կովի յենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կփորենք մենք
Մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր վոչ սարուկ կա, վոչ դժգոհ:

— Սա յե վերջին կռիվը
Յեվ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե:

Լոկ մենք, ճորտեր ու բանվորներս,
Ունենք անխախտ մի իրավունք՝
Ասել, վոր հողը մերն է, մերն է,
Կորչի հարուստը թող տղրուկ:

Յեվ յերբ պայթի մեծ փոթորիկը,
Յեվ կուշտ շները չքանան,
Նորից յերկիրը և յերկինքը
Մերն է ու մերը կման:

— Սա յե վերջին կռիվը
Յեվ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե:

ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՑԱՆ

ՄԵՌԱՆ՝ ԶԿՈՐԱՆ

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան,—
Մեռան՝ չկորան...

Կրակն եր ցայտում նրանց աչք-ուռքից,
Շանթը՝ շրթունքից,

Յերբ խոսում էյին ծով-ամբոխի մեջ
Վիշտ ու կարիքից.

Վրեժի, ցասման հրով բորբոքված՝
Նրանք բեմ յեկան,

Յեվ բեմը դարձավ արյունով ներկված
Զոհերի սեղան.

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան...

Այսոր բանտերում, վաղը աքսորում,
Մյուս որ կախաղան

Հանելու համար դահիճը դաժան
Կացինն եր սրում,

Բայց հերոսների շուրթերից սեղմած
Նղովք չեր լավում.

Բաժակն են ըմպում վերածնություն
Սյունիքին կախված

Ու հիմն յերգում հեղափոխության՝
Հպարտ, վոչ հաղթված.

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան...

Հէյ, ազատության անպարտ զինվորներ,
Դուք, վոր անխուով

Ներկեցիք փողոց ու գործարաններ
Ձեր տաք արյունով,

Նույն վայրում այսոր ջահել-ջիվաններ
Ըմբոստ շարքերով

Ձեր գովքն են անում... Ձեր թափված արյամբ
Մնվում, ամրանում...

Յեվ անմահներիդ յերգվում են անվամբ

Ու հպարտանում,

Վոր դուք, յիրավի, պատվով, վեհությամբ

Ձեր գործը տարաք,

Մեռած, չկորած...

Գ. ՄԵՍՅԱՆ

ԿԱՐՄԻՐ «ՀՈԿՏԵՄԲԵՐ»

Քաղաքն եսոր վարդ՝

Կարմիր է հագել.

Վահ, եսքան ել մարդ...

Ի՞նչ է պատահել:

Գետի պես վառար

Փողոցները լի,

Դրոշները վառ

Ալիք են տալի:

Ուրախ յերգ ու քայլ.

Բանվոր, մանուկներ,

Զվարթ թմբկահար

Իրար են խառնվել:

Բանակը կարմիր՝

Քայլով համաչափ

Շարում է մին-մին

Շարքերը պողպատ:

Ավտոները լիք

Ինչքան մանուկներ—

Վառ Հոկտեմբերիկ,

Աշխույժ պիոներ՝

Ներկել են դարնան

Ծաղիկների պես...

Թնդում է ուռան —

Փայլուն զորատես:

Ու եղ ծովացած

Շարքերի միջում

Հոկտեմբերիկի

Զիլ ձայնն է հնչում.

«Քո սերունդն ենք մենք

Կորմիր Հոկտեմբերիկ»:

ԸՆԿԵՐՆԵՐԸ

(Ըստ Յեսեկիցի)

Նրանք փոքրիկ եյիս՝ յերեխան ու կատուն.
Մեկտեղ խաղում եյին տախտակների վրա,
Մինչև մութն իջնեք, մինչև հայրը գար տուն.
Ու հողագույն հացով կերակրեք նրանց:
Հայրը բանվոր էր: Միշտ առավոտ ծեփին.
Նա գործարան կերթար ու յետ կգար մութին...
Հաց կրեք եր իրա յերեխային մի քիչ,
Յերեխան ել կտար կեսը կատուն ուտի:
Եսպես ապրում եյին: Հայրը նրանց մեկ-մեկ
Բան կպատմեր դրսի հարուստների մասին,
Վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում յերեք —
«Ինտերնացիոնալ» կերպեր՝ յերեխան լսի:

Ու կպատմեր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
Պիտի արյուն թքի, վոր չոր փշրանք գա տուն...
Ու լուռ թյուն դարձած՝ իրիկնային մութին
Կլսեյին նրան յերեխան ու կատուն...
Բայց մի էր, մի որ կարմիր,
Գործարան չգնաց ել հայրը.
Աչքերում վճիռ կար մի,
Ժպիտը հաստատ ու անծայր էր:

Փողոցում մարդիկ, մարդիկ.
Դրոշները ավան — կարծես տոն էր...
Ու նման էր մայիսյան վարդի՝
Որեքում այդ հոր խնդու թյունը:

Յեվ մի որ համբուրեց զավակին
Բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.
Համբուրեց աչքերը կառվի
Ու գնաց անծայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը
Համբուրեց նրանց վերստին.

— «Հասկանում ե՞ք», — ասավ, — ժամանակն է՝
Զարկելու յենք հարստին»:

Ու յելավ: Փողոցում կրակոց էր:
Փողոցում չորեք բանվոր հայրը:
Զորքերով լիքն էր փողոցը:
Փողոցում կռիվ ու պայքար էր:
Զարկեցին... Ճչաց բանվոր հայրը.
Հարվածը կրծքին էր հատու.
Բայց հառաչը խոր ու անծայր այն
Լսեցին յերեխան ու կատուն...
Վաղեց, վաղեց փողոցից փոքրիկ յերեխան.
Կատուն վաղեց հետքից իր ընկերոջ փոքրիկ:
Նրանց գլխին կարկուտ, կարմիր գնդակ տեղաց,
Ու յերկուսն ել ընկան հայր բանվորի կողքին:
Զխաղացին նրանք ել հատակի վրա,
Զսպասեցին ել զուր՝ հայրիկը գա տուն.
Նրանք փոքրիկ-փոքրիկ նահատակներ յեղան —
յերեխան ու կատուն:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔՍԱՆՎԵՑ ԵՅԻՆ...

Դսան-վեց եյին...
Նրանք ամենքն ել՝ ջահել ու յեռուն,
Նրանք ամենքն ել նորաշունչ դարուն —
Փնջած մեխակներ — քսան-վեց ընկեր:

Կռիվ էր զարկել
Անգղիների դեմ քսանվեցն այն,
Յեվ անհավասար ու դյուցազնական
Այն մեծ կռվի մեջ նա գերի ընկել:

Ու մի առավոտ,
Յերբ աստղերը կաթ դեռ չեյին հագել՝
Ախչա-Կույմայի դաշտում ավազոտ
Վեհ քսան-վեցին բերին կրակել...

Յերկու-յերկու շարք
Արձանի նման կանգնել են նրանք
Գունատ ու հպարտ. լուռ են, չեն խոսում,
Արհամարհանքով մահին սպասում...

— Կացեք մի վայրկյան, —
Հանկարծ վորոտաց սև դահիճներին
Ընկերն Շահումյան. —

Յերջանիկ ենք մենք, վոր հիմա կընկնենք
Յերազած մահով ջահել ու վայել
Կոմունարներին.

Բայց լավ իմացեք, վոր հենց իսկ վաղը
Սպասում ե ձեզ խայտառակ մահը —
Վայել շներին...

— Մենք այդ լավ գիտենք...
Յերերաց մի ձայն... Ու հանցավ վայրկյան՝
Գնդադիրներից քսան-վեցն այն
Հնձած արտի պես կող-կողի ընկան...

Գնացքը յետ գնաց...
Մինչ քսան-վեցը իրարու գրկած՝
Ախա-Կուլմայի ավազոտ գողում
Ամեն լուսածեղ կոմունարների
Հիմն են յերգում...

Ն. ԶԱՐՅԱՆ

ՔՍԱՆՎԵՑԸ

Անապատում նրանք ընկան,
Դասակարգի աչքից հեռու:
Անդրկասպյան ավազներում,
Անապատում նրանք ընկան:
Լիրբ բորենին բրիտանական
Վրխից վռնում եր, հռչում,
Անապատում նրանք ընկան,
Դասակարգի աչքից հեռու:

Կգա ըոպեն և՛ հատուցման,
Յեվ մեր գնդակն ել չի շեղվի.

Քեզ համար, դահիճ Դենստերվիլ,
Դեռ կգա ըոպեն հատուցման:
Դեռ այն վեճն արնոտ չի լուծված
Յեվ — անեղ, անխուսափելի —
Դեռ կգա ըոպեն հատուցման,
Յեվ մեր գնդակն ել չի շեղվի:

Միշտ նույն կրակն ե ինձ հուզում —
Կովել ձեզ պես հերոսաբար.
Անմարելի և անդադար
Միշտ նույն կրակն ե ինձ հուզում:
Մահն ընդունել ձեզ պես հզոր
Ու թշնամուն նայել հպարտ. —
Միշտ նույն կրակն ե ինձ հուզում —
Մեռնել ձեզ պես հերոսաբար:

Նրանք ապրում են կենդանի
Ամենորյա մեր պայքարում.
Թարմ ու վառման, վորպես անյուն,
Նրանք ապրում են կենդանի:
Ըմբոստ վողին Շահումյանի
Շրջում ե դեռ, դեկավարում.
Նրանք ապրում են կենդանի
Ամենորյա մեր պայքարում:

Կարմրակրակ լուսաբացի
Լուսի համար նրանք ընկան
Այն վիթխարի, հերոսական
Կարմրակրակ լուսաբացին:
Յեվ արյունով Քսանվեցի
Լուսաբացը ալ ներկ հագավ,
Դրա համար նրանք ընկան
Կարմրակրակ լուսաբացին:

Խ. ՄԱՏԻՆՅԱՆ

ԻՄՆ Ե ԱՅՍ ՏՈՆԸ

Ի՛մն ե այս տոնը, իմը, գեղջուկիս,
 Վոր միշտ մի կտոր սև հացի համար
 Որեր, տարիներ, անքուռն մինչև լիս
 Գրտինք եմ թափել ուրիշի համար:
 Ի՛մն ե այս տոնը, իմն ե մեյդանը,
 Լսում եք՝ հարուստ, կնյաղ ու աղա,
 Վոր ձեր երեկվա նոքար թևանը
 Փափախը հանած կանչում ե ուռն:
 Ինչո՞ւ յես լռել, զուռնաչի խնչան,
 Շուտ արա՛, ածա, վոսկրերս խաղան.
 Ի՛մն ե այս տոնը, իմն ե մեյդանը,
 Հիմի պիտ պարի նոքար թևանը:

Գ. ՄԵՍՅԱՆ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Մենք նոր կյանքի
 Ծաղիկն ու վարդ,
 Դուրս ենք գալի
 Այսոր զըվարթ,
 Ուրախ յերգով
 Վողջույնների,
 Կարգ ու շարքով
 Պիտների,
 Վոր վողջուսները,
 Մկր տոնը մեծ,
 Նրան, վոր մեզ
 Նոր կյանք բերեց:
 Ու մեզ հետ ել
 Մեզ շարքակից՝
 Դուրս ե յեկել
 Հոկտեմբերիկ,
 Վոր միացած
 Չայնովը մեր
 Վողջուսներ քեզ,
 Մեծ Հոկտեմբեր:

Գ. ՄԵՍՅԱՆ

ՇՈՂՈՒՄ ԵՆ ԴՐՈՇՆԵՐԸ ԲՅՈՒՐ

Ինչո՞ւ յենք ուրախ եսպես,
 Ես ի՛նչ ե յեղել եսոր—
 Զնգում են խոսքեր վոսկե,
 Դրոշներ՝ հազար ու բյուր:
 Քաղաքը հագել ե կարմիր,
 Զուգվել են ամենքն եսոր.
 Ուռնում ե— փողոցները լի—
 Մարդկանց ալիքը հզոր:
 Շարքեր՝ անվերջ ու կից—
 Պատանի, մանուկ՝ առույգ,
 Դողում ե գետինը զարկից,
 Անցնում են նրանք զույգ-զույգ:
 Նոր յերգ են յերգում նրանք,
 Նոր կյանքի, հպարտ ու ժիր.
 «Կառուցենք պիտի աշխարհք՝
 «Մեր ուժով, մուրճով կարմիր:
 «Կապենք վառ, կարմիր գոտի
 «Մեր տիրած յերկրին արար.
 «Սուրտակենք հինը՝ անոտի,
 «Կառուցենք նորը մեզ համար»:
 Գալիս ե յերկար ու ձիգ
 Շարանը պիտների,
 Բերում ե մի նոր ալիք՝
 Նվերը Հոկտեմբերի,
 Վորոնք դրոշը բռնած
 Թաթերով իրենց փոքրիկ՝
 Տանում են՝ վրան գրած՝
 «Վորդիքն ենք Հոկտեմբերի»:
 Շողում են դրոշները բյուր,
 Զնգում են վոսկի խոսքեր,
 Վողջույն քեզ, բոցե վողջույն,
 Վարդերես վառ Հոկտեմբեր:

Վ. ՆՈՐԵՆՑ

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅԵՐԳ

Հաղթանակի տարեդարձ,
Պայքարների նոր խթան,
Թող շեփոքեմ յերգը քո,
Յերգը կուլի սրընթաց,
Յերգը կարմիր հաղթության՝
Նոր մարտերը բորբոքող:

Նոյեմբերյան սուրը մերկ
Իմ աչքերում շողա թող
Յեվ շափաղե սրտում իմ,
Շողը դառնա կուլի յերգ
Յեվ բանակին մեր հաղթող
Հանե վերջին յերգումի:

Փարբիկներում, հանքերում
Բանվորական ձեռքեր պիրկ
Բարձրանա նոր լարումով,
Ու կռիվը մեր յեռուն
Հաղթանակե գիրք առ գիրք
Վերջին գիրքի առումով:

Համայնական դաշտերում
Հավաքական կամքը թող
Բարձրանա նոր հորձանքով
Ու նոր գյուղը աններում
Հին կապերը կտրատող՝
Ապրի, շնչի նոր կյանքով:

Նոյեմբերյան տարեդարձ,
Հաղթանակի խնդություն,
Հաղթանակի նոր դրոշ.
Այդ հաղթությամբ վեհապահ
Մեծ կառուցման ճակատում
Թող բորբոքվի նոր գրոհ:

Գ. ՄԱՀԱՐԻ

ՎՈՂՋՈՒՅՆ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

(Հայաստանի խորհրդայնացման)

Յեւնող նորոգ կյանքից վողջճւյն Նոյեմբերին,
Հանդերից ու հանքերից — վողջճւյն Նոյեմբերին,
Մանուկներից անդին, ծաղիկներից կյանքի,
Արոտից ու հանքից — վողջճւյն Նոյեմբերին:

Ջրանցքներից կայտառ, առուներից զվարթ,
Կայաններից լուսե — վողջճւյն Նոյեմբերին,
Ու դաշտերում յերգող յերկաթ յերկվարից,
Աշխատանքի խանդից — վողջճւյն Նոյեմբերին:

Հին աշխարհի բանտից յեկանք մենք վեհ ու վառ,
Մեր արնավառ կամքից — վողջճւյն Նոյեմբերին:

Լ. ՄԵՂՈՍԻՍ

ԿԱՐՄԻՐ ՊԱՀԱԿ

Մեր մեծ յերկրի
Սահմաններին
Մութ գիշերին
Արթուն-անբուն՝
Բուք ու քամուն
Շինեին հազած —
Մեր պահակն ե
Հրացանն առած...

Յերկու ընկեր —
Պահակն ու սվին —
Յերկուսն ել պինդ
Յերկաթ, պողպատ...
Ամբողջ գիշեր
Ու մինչև լիս
Լճու, համաչափ
Գնում ու գալիս...



Պահակն արթուն
 Կանգ է առնում.
 Ուշի-ուշով
 Հեռուն դիտում՝
 Չընի՞ մթնում,
 Սուս ու կամաց
 Նենգ թշնամին
 Վոտքը դնի
 Մեր սահմանին...

Գիտե՞ս ով է
 Այդ պատանին. —
 Գործարանի,
 Կամ խրճիթի
 Մի վորդի յե,
 Զենք է առել,
 Վոր իր կրծքով
 Միշտ պաշտպանի
 Կարմիր օրը:

Գովքի արժան
 Ու անբաժան
 Յերկու ընկեր՝
 Կարմիր պահակն
 Ու իր սվին,
 Ամբողջ գիշեր
 Ու մինչև լիս
 Լճու, հավասար
 Գնում, գալիս...
 Վոր թշնամին
 Վոտք չըդնի
 Մեր սահմանին:

Ն. ԶԱՐՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Նա տուն էր գալիս Կարմիր բանակից:
 Են բատրակ տղեն — անունն Ալեքսան:
 Գրքերով լեցուն մի պարկ շալակին
 Ու դռին կարմիր աստղաձև նշան:
 Մի անծայրածիր աշնան յերեկո
 Փովել էր անափ դաշտերի վրա:

Յեվ Ալեքսանի՞ սիրտը թե առած՝
 Ուզում էր թռչել մաշինի հեքով
 Ու տուն սլանալ իրենից առաջ:
 Նա քանի գնում, մոտենում էր տան,
 Անցնում էր ծանոթ արտերի մոտով,
 Լցվում էր հնքան անհուն կարոտով,
 Սիրտը անհամբեր զարկում էր հնքան:

Կարմիր բանակից նա գալիս էր տուն,
 Խորունկ մտքերով վառված էն տղեն:
 Սրտում յերկու բոց, յերկու վառ յերդում,
 Շուրջը — յերեկո, մշուշ վոսկեղեն:
 Յերդովեց յերեկ:
 Բանակում հանգես ու միտինգ արին:

— Յես խոսք եմ տալիս կյանքս նվիրել
 Ընկեր Լենինի մեծ գաղափարին:
 Յեվ նրա քարե վեհ արձանի դեմ,
 Լենինյան Կարմիր դրոշի ներքո
 Նրանք յերդովեցին՝ կովել, աշխատել
 Կոլեկտիվ սրտով — կոլեկտիվ ձեռքով...

Գ. ԳՐԻԳ

Մ Ա Յ Ր Ը

Դարձել ես հաղթական կովից,
 Յեկել ես մեզ, մորդ տեսնես.
 Իմ քաղցրիկ, քաջասիրտ բազե,
 Իմ յերազ, իմ մուրազ լուսե:

Ճակատդ, աչքերդ անուշ
Բեր ամուր, ամուր համբուրեմ,
Իմ նախշուն, իմ թառվան բալա,—
Սարերի շուշան ու լալա:

Ո՛ր, ինչքան գիշերներ, հոգիս,
Տանջվիլ եմ, յերազել անքուն,
Սեղմել եմ նամակդ կրծքիս,
Արտասվել, հառաչել թագուն:

Դե պատմիր, դե խոսիր, բալես,
Մեր Կարմիր բանակից ասա.
Թող սիրտս հոգնած ու ահել
Նոր արև, առավոտ հուսա:

Եդ լի՛նչ ե, վերք ունիս թևիդ,
Թեթև ե՞, անջնամ, փոքրիկ...
Շուտ սրա, շինելդ հանի,
Քոռանան աչքերը նանի:

Վերքդ բեր համբուրեմ, բուժեմ,
Փարվեմ քեզ, զգվեմ քեզ ամուր.
Աչքերիդ արևին մեռնեմ,
Վերքիդ եդ՝ արուն ու մրմուռ...

Ասում ես պետք է շոտ դառնաս.
Ասում ես չե՞ս կարող միալ.
Ո՛ր, Կարմիր բանակի գինվոր,
Վերավոր իմ բալա աղվոր...

Դե գնա, ձեր ճամբեն խիզախ,
Թող արև ու կանաչ լինի.
Յեղիր քաջ, համարձակ, անվախ,—
Աշխարհը նոր արև տեսնի...

Ճակատդ, աչքերդ անուշ
Բեր մեկ ել, մեկ ել համբուրեմ—
Իմ քաղցրիկ, քաջասիրտ բաղե,
Իմ յերազ, իմ մուրազ լուսե...

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

ԱՅՍ ԳԱՐՈՒՆԸ

(Մարտի 8-ի առթիվ՝ գեղջկուհիներին)

Մեզ մոտ գարուն է հիմա, մեզ մոտ յեռանդ ու լարում,
Բայց գարունը մեզանում մի այլ արև է վառում,
Այս գարունը, վոր հիմա զրնգում է յերկրում մեր—
Մենք ենք բերել պայքարով, մենք ենք կյանքում բռնկել:

Ինչքան արևը զնգա ու հուրհուրա աշխարհում—
Հո չի՞ կարող բռնկել նա այսպիսի մի գարուն:
Այս գարունը կրակվում ու բորբոքվում է բեզուն—
Յերբ ջրերի հետ մեկտեղ՝ դասակարգն է հեղեղում:

Անդուլ յելած յերբ մարտի՝ արգելքներին անտարբեր՝
Քույրը դառնում է մարտիկ, կինը դառնում է ընկեր:
Յերբ ինչպես ջուրը վարար՝ հորձանքներում պայքարի—
Սրբում, տանում է հնի կողկոճները աշխարհից:

Դուք հիմա դաշտ եք յելել, մտել ալումբ ու փողոց,
Զրնգում է մեր յերկրում ձեր բանակը հիմա հոժ:
Դուք զվարթ եք ու ազատ սավետական մեր յերկրում,
Ձեր հանդերում հարազատ, ուր աշխատանքն է բերկրում:

Յեվ ձեր գործում ամեն ուր, ձեր հոգսերում ու խաղում—
Մեր նոր կյանքն է խլրտում, մեր գարունը ծիծաղում:
Այս գարունը, վոր կյանքում չի վառի վո՛չ մի արև,
Յեթե ինքներս անդուլ աշխատանքով չվառենք,

Յեթե հրում այս մարտի, վոր յեռում է յերկրում դեռ—
Զդառնա կինը մարտիկ, չդառնա կինը՝ ընկեր:
Այս գարունը, վոր հիմա զրնգում է մեր յերկրում—
Անդուլ պայքարն է բերում, աշխատանքից է բերկրում...

Գ. ՄԵՍՅԱՆ

ՓՈՔՐՐԻԿՆԵՐԸ «ՄԱՐՏԻ 8-ԻՆ»

Մի արտակարգ
Աշխուժությամբ
Մանկապարտեզն
Այսօր զվարթ
Ղեկավարում է
Փեթակի պես:
Մեղունները՝
Պատիկ ու մեծ
Աղջիկներն են
Տղաներն են,
Վոր ողակներ
Դառած փունջ-փունջ՝
Աշխատում են,
Տեսեք, ինչ լո՛ւրջ:

Վաղը չե՞ վոր
«Ութն է Մարտի» —
Միջազգային
Կանանց մեծ օր,
Հանաք հո չի՛:
Վարժուհին է
Առել նրանց,
Վոր այդ օրը
Տոնն է կանանց.
Պիտ զարդարեն
Պարտ ու պատշաճ
Դասարանի
Անկյուն ու պատ:

Ու եղ տոնի
Համար հիմա
Աշխատում են
Քանի՛ փոքրիկ
Հոկտեմբերիկ —
Աղջիկ — տղա:

Բաժանել են
Գործն իրենց մեջ.
Վոչ ավել բառ,
Վոչ ավել վեճ:
Մուրճն է խոսում
Միայն հատ-հատ՝
Զարդարվում են
Անկյուն ու պատ...
Պլակատներ՝
Սիրուն, զուգված.
Տառերն իրենց
Գրողի պես՝
Լողունդներից
Ժպտում են ցած —
«Կեցցե ես մեծ
Տոնը կանանց»:

ՀՌԻՓՍԻՄԵ ԱՇԽԱԲԱԴՅԻ

ԱՅ ՆԱՆԻ

Լաչակդ բաց, այ նանի,
քթկալդ բաց, այ նանի:
Թող մի քթիդ, յերեսիդ
ող, քամի տա, այ նանի:
Ենքան չանեղ կապ մնաց,
տափակել է, այ նանի,
քիթ-բերանդ փակ մնաց,
ծամովել է, այ նանի:
Աչքերդ բաց, այ նանի
աչքերդ թաց, այ նանի,
Թող արև տա, չորանա,
արցունք ու լաց, այ նանի:
Հոկտեմբերը քեզ համար
նոր կյանք բերավ, այ նանի.
ցուրտ ձմեռդ վերացավ,
գարուն յեկավ, այ նանի:
Ականջներդ բաց արա
մարտի ութն ա, այ նանի,
շարաշ կանչի, ծափ արա,
կանանց տոնն ա, այ նանի:

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Մ Ա Ր Տ Ի Ց-Ը

Մարտի ութին,
 Լիս ու մութին—
 Մի ձեն ընկավ գեղով մին,
 Պիոներ փողն է,
 Զիլ կանչողն է,
 Հավաքում ե ամենքին:

— Ա՛յ կնանիք,
 Հարս ու աղջիկ,
 Շուտով յեկեք ժողովի.
 Շուտով վազեք,
 Շուտով հասեք,
 Սա՛ տոն է գեղ-գեղովի.
 Գեղը քիչ է,
 Գեղը՝ լճն է—
 Քաղաք ասա, վողջ աշխարհ:

— Բերեք, բերեք,
 Հաշիվ արեք,
 Ես տարի ինչ եք արել,
 Քանի՞ կնկա,
 Հարս, աղջկա
 Լիկկայան եք ուղարկել:

Դուք արժի եք,
 Կատարել եք—
 Պատգամը մեծ Լենինի,
 Վոր ամեն կին
 Ու տանտիկին—
 Պետք է գրագետ լինի:

Ա՛յ, ես մեկին,
 Այրի մի կին—
 Գյուղխորհուրդ ենք մենք տարել.
 Իսկ Սոնիկին—
 Մեր Չոնիկին
 Կոռպուսավետար ենք արել:

Հերոս ամառ
 Գեղի համար
 Մենք հիմնել ենք կաթնարտել.
 Մեր կին-բաժինն —
 Իբեն բաժին
 Գործը լավ է կատարել:

— Ել անգրագետ,
 Խավար, տգետ—
 Մեր մեջ չկա վոչ մի կին.
 Արի դրկից,
 Սոցմրցակից—
 Հայտարարենք ամենքին:

Գ. ՄԵՍՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԻՆ

Ազատ մեր յերկրում
 Տիրում է այսօր
 Խինդ ու բերկրում.
 Մանուկ ու բանվոր,
 Գյուղացի, զինվոր
 Յեւած միասին
 Տոնում են ուրախ
 Տոնը Մայիսի...

Սակայն ամեն տեղ
 Մեզ պես այս օրը
 Ազատ չեն տոնում
 Մեր յեղբայրները:
 Նրանց չեն թողնում,
 Վոր աշխատանքի
 Մեծ օրը տոնեն:

Սպառնալիքով
 Մտրակի, ձեծի—
 Քչում են գործի...

Բայց նրանք խմբով
Յեղնում են ցույցի.
Նրանց կանչում ե,
Նրանց քաշում ե
Զվարթ աղմուկը
Հմբոստ փողոցի:

Նրանք յեղնում են
Արձադանգելու.
Նրանք յերգում են
Մեղանից հեռու
Մեղ հետ միասին,
Մ ե կ ը Մ ա յ ի ս ի:

Վողջույն ձեզ, հեռու
Մեր մեծ ընկերներ.
Մենք հովանավորիկներ
Ազատ յերկրում,
Զեր ճնշված յերկրի
Բողոքն ենք լսում:

Դուք չվհատեք.
Մոտ ե այն ուրը,
Յերբ մենք կհաղթենք.
Յերբ վոր բանվորը
Այդտեղ ել կընի
Իր յերկրի տերը:

Ու մեր շարքերը
Փոխարեն կզան
Հողնած մեծերիդ
Աղմուկով ուրախ.
Խառնված իրար՝
Աշխարհե աշխարհ
Կգոչենք ուռած.
Ու տերն աշխարհի
Կտոնի ազատ
տոնն աշխատանքի:

ԱՐԱՋԻ

ԿԱՐՄԻՐ ԲԱՌԻԿԱԴ

Մայիսի 28 ն եր, Կոմունայի վերջին ուր:

Հերոսական կովից հետո ընկնում ե Պեր-լա-Շեզ գերեզմանատան
դիրքը, և Կոմունայի վերջին բեկորները դիմում են Ֆոնտենո փողոցի
բառիկադը:

Այդտեղ են Կոմունայի Կենտրոնական Կոմիտեյի անդամները,
կարմիր ժապավեններով զարդարված:

Հսկայական կարմիր դրոշմ ծածանվում ե բառիկադի վրա:

Մնացել են վերջին բեկորները և պատրաստվում են մի նոր կովի:
Արդեն հոգևարքի մեջ ե մոտակա Սեն-Մոր փողոցի բառիկադը. նրան-
ցից վոչ հեռու, մյուս բառիկադի վրա մնացել ե միայն մի մարդ,
բայց համառությամբ շարունակում ե կովել:

Շատ չանցած, հեիհե վազում ե դեպի կարմիր բառիկադը մի
աղջիկ:

— Յես գալիս եմ ձեզ ոգնելու, — կանչում ե նա, — յես Սեն-Մո-
րից եմ գալիս... Նա արդեն ընկավ:

— Այստեղ ամենավտանգավոր տեղն ե, մի գալ այստեղ:

— Վոչ, յես յեկել եմ ոգնելու և պիտի ոգնեմ:

Վերջին բուսներն եյին:

Ռազմամթերքի վերջին փշրանքներն եյին մնացել:

Հերոսները լրցրին թնդանոթները յեղած ռազմամթերքով ու
վերջին անգամ արձակեցին:

Լավեց վորոտը, և ամեն ինչ լռեց:

Կոմունան ընկավ:

Բայց դեռ յերկաւ տարիներ հիշում եյին այն կարմիր բառի-
կադը ու այն անձնվեր հերոսուհուն, վոր յեկել եր ոգնելու:

Գ. ՄԵՍՅԱՆ

ՓԱՐԻԶՅԱՆ ԿՈՄՈՒՆԱՆ

Փարիզը կարմիր եր հագել
Այդ ուրը, վառել փարոս.
Փարիզի տերն եր դառել
Բանվորն այդ ուրվա հերոս:

Նա, վոր ստորուկ եր յերեկ,
Կոռւմ եր իր համար շղթա,
Այդ որը փշրել եր մեկ-մեկ՝
Ստեղծել ազատ կոմունա:

Սակայն մենակ մնաց նա՝
Կտրված ընկերներէց,
Հրեշը, թեւթափ յեղած,
Վոտքի յեր յելել նորից —

Վերսայլի վոհմակը դադաղել,
Ուժերն իր լարած վերջին՝
Վրեժ եր ուզում լուծել
Ըմբոստ Փարիզի միջին:

Ու ծառս յեղած խիղախ,
Այդ անհավասար մարտում,
Կռվում եր կոմունան անվախ,
Վոր չկրի պարտում:

Վոր վոչ մի գնով չտա
Կոմունան նորածին,
Թեկուզ մեկի տեղ հազար
Իր դեմ գա թշնամին:

Անցան յերկար տարիներ,
Բայց չմարեց փարոսն այն.
Ընկած հերոսների տեղ
Նոր մարտիկներ վերկացան
Նոր ուժերով ու ըմբոստ.
Միլիոնները միացան
Ու վառեցին նոր փարոս
СССР-ում լաշնածայր...

Իսկ փարոսից այդ հզոր,
Ամբողջ աշխարհը պիտի
Մի որ կարմիր ու բոսոր
Հրդեհներով բռնակի:

ՀԱԿ. ՀԱԿՈՒՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ-ԻՆ

Կանգնել եմ ահա պատկերի առաջ,
Դիտում եմ նրա դժերը դեմքի.
Սա հանճար ե մի, թե՞ զորավար քաջ,
Վոր պաշտամունքը դարձավ ամենքի:

Գանգը լյառ ե լերկ, անհաս ու հպարտ,
Ճակատը անհաշտ — կռիվների դաշտ, —
Խոր աչքերի մեջ այրող անապատ,
Անողոք իրա հրով կռապաշտ:

Նայում ե հեզնոտ անցած աշխարհին
Յեվ կարծես ծաղրում բուրժուաներին.
— Վճրքան ել ուզեք վեր կենալ նորից՝
Դատապարտված եք մահվան, այսորից:

ՅԵ. ԶԱՐԵՆՑ

Լ Ե Ն Ի Ն

Դիտե՛ք թե աշխարհի արգանդից
Ինչքան հանճարեղ մարդիկ,
Ինչքան, ինչքան Կրոմվել
Կամ հնդիկ Դանդի —

Անթիվ

Յեղել են,

Կան դեռ

Ու կգան. —

Այն ինչ Իլյինը — մեկ ե,

Ուրիշ Իլյին — չկա:

Դատակարգը

Դար դարի յետեից

Մնել ե Իլյինին:

Դասակարգը
Դար դարի յետևից—
Հյուսիսը և հյուսիսը:
Անգամ ջրկերը Տիբեթի
Տվել և Իլլիշի ուղեղին
Մի թել,
Թել-թել,
Նյարդ-նյարդի յետևից
Հյուսիսը և—
Բարդ կանվա:
Յեզ հիմա
Իլլիշը—
Վախճանված...
Մեռած կամ.
Կամ չկամ...
Ձե, պրոլետար,
Իլլիշը—իմ մեջ և,
Քո մեջ և,
Նրա մեջ և,
Իլլիշը—կա,
Կա դասակարգը:
Դասակարգը
Պարզել և Լենինին իբրև ղեկի:
Դասակարգը հակադրել և հինին—
Իր
Լենինին:
Ու կարգի հսկի
Լենինի ՉՄ:
Ե՛յ,
Դուք,
Ռոկֆելլեր,
Ստինսես,
Մորգան կամ,
Լսում եք՝
Մենք դեռ կզանք.
Մեր բանակը կանցնի դեռ ձեր
աշխարհով:
Դեռ կզա Իլլիշը,
Վոր մտնի համաշխարհային
Սոցիալիզմ:

36. ԶԱՐԵՆՅ

ՉՈՒԳՈՒՆԵ ՄԱՐԴԸ

Վորպես մի հսկա, անհողդողդ—վեհ՝
Կանգնած և մարդն այդ չուգունե...
Դիմացը—լեռն և սրագագաթ,
Վորի այն խոփոռ գագաթին ցից
Թառել և վանքը վորպես արծիվ:
Ներքևը, վարը, ահա վարար
Հոսում և գետը:—Նրա ափով,
Վորպես մի հողի ժապավեն գորշ՝
Բարակ ձգվում և ահա շոսան:—
Քանի՜ դարեր և այստեղ հոսել
Այսպես այս գետը, քաշել՝ հեռուն
Պղտոր ջրերը իր վարարուն
Յեզ իր ափերին ամայի, սև,
Լոկ խոփոռ ժայռեր այստեղ տեսել...

Հիմա այս ձորում, անհողդողդ—վեհ՝
Կանգնած և Մարդը այդ չուգունե:—
Հասակը բարձր է:— Հպարտ կեցած,
Վորպես մի քարե վիթխարի սյուն՝
Անհուն հայացքը սեռած ցած՝
Պարզել և ձեռքը:— Ինչո՞ւ յե նա
Ներքևում կեցել, վորպես պահակ,
Յեզ շուրջը, շուրջը նրա, ահա
Յեռում է կյանքը բյուրարեզակ:—
Դա թվ և, ի՞նչ և արդյոք խոկում.
Յեզ ի՞նչ մտքեր են արդյոք նստել
Նրա ճակատի խորշոմներին.

Նա ի՞նչ է ուղում այս ափերից
Յեզ ինչո՞ւ յե նա յեկել այստեղ...
Մռայլ և վանքը:— Անհուն ահից
Կքվել, թեքվել և նա ափիլի,
Յեզ քարե սիրտը այդ ահով լի՝
Նա լուռ նայում և հեռուններին,
Նայում է՝ աչքը ահեղ մահի:—
Յեզ լուռ և շուրջը ու ամայի:

Մուսլ է վանքը:—Կաած ժայռին,
Վորպես մահամերձ մի ցին վայրի՝
Շնչում է ծանր, հազիվ հեռում:—
Անցնում է կյանքը... Ու ներքևում,
Վորպես մի հսկա, անհողողող — վեհ՝
Կանգնած է Մարդը այդ չուգունե...

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

ԼԵՆԻՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ

Ահա մարդը, ընկեր,—Ապառաժի պես կուռ
Վոր անձրևից, շանթից իր մեջքը չի ծռել,
Նա դարերի անեղ հեռուններն է հսկում,
Նա դարերի ճակատին իր անունը գրեց:

Նրան դու չես ջնջի, ինչպես վոր չես ջնջի
Յերկնի լուրթ յերեսից արեգակը կարմիր,
Տիրաններ ընկան նրա անեղ շնչից
Ու շառաչեց յերկրում հոկտեմբերյան քամին:

Ահա մարդը, ընկեր: Հպարտ լինենք հիմա,
Ծոփն անեղ է դեռ, ու հողմ է սաստիկ,—
Հպարտ լինենք, վոր կանք նրա նավի վրա,—
Նա նավապետ արթուն, իսկ մենք — նավաստի:

Գ. ՄԵՍՅԱՆ

ԼԵՆԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Դեռ փոքր եր Արմիկը,
Յերբ նրա հայրիկը—
մի բանվոր—
Իր հետ տարավ մի որ
Մի մեծ հանդիսի,
Վոր Արմիկն այնտեղ
Եղ որը տեսնի:

Փոքր եր թեև Արմիկը.
Փոքր եր և միտքը նրա,
Բայց շատ բան է պահել իր միտք
Են որից մինչև հիմա:

Հիշում է վոր՝
Զարդարված եր քաղաքը
Գեղեցիկ ու շուքով,
Ծփում էր հրապարակը
Հաղար դրոշակով,
Քայլում էին համաշափ
Շարքը շարքի միջով—
Պիտներ ու բանվոր շատ
Իրանց առաջով:

Ցույց եր տալիս հայրը
Նրանց վրա մին մին
Ու պատմում ժպտալով
Փոքրիկ Արմիկին՝
Թե ինչո՞ւ յեն բոլորը
Եսպես մեր յերկրում
Ամեն տեղ ես որը
Հանդեսներ սարքում:

Թե ինչպե՞ս առաջ
Մեր յերկրումը մեծ՝
Բանվորը խավար եր,
Գյուղացին տգետ,
Ու տանջվում էին
Նրանք իրար հետ,
Տանջվում միասին.
Իսկ ծանրը նստած
Յերկուսի վզին՝
Նրանց քրտինքով
Ապրում էին կուշտ
Գյուղի ու քաղրի
Ցեցն ու վաշխառուն...

Պատմում եր թե՝
Ինչքան ել վարեր,

Ցաներ գյուղացին,
Դարձյալ սոված եր՝
Զհասած հընձին.
Գալիս եր քյոխվեն,
Գալիս տերտերը.
Հանում եր չուխեն
Հին պարտատերը,
Ու սրբում, տանում,
Խլում ամեն ինչ...
Ո՞վ եր հարցընում
Կամ շատը, կամ՝ քիչ...
Նույնն ել քաղաքում,
Նույնն ել՝ բանվորին.
Նախանձող չկար
Վոչ մեկի որին:

Ալիք են տալիս
Նորից քայլերը —
Բանակն ե գալիս,
Կամ պիտները...
Փոխում ե հայրը
Պատկերների հետ
Պատմությունը իր՝
— «Ապա, բալիկս,
Մի սրանց նայիր,
Վոր մեծանաս դու
Կքայլես հասկես
Սրանց շարքերում»:

Իսկ ինքն Արմիկը
Զեր լսում նրան.
Ու շքը խլի եր
Ուրիշ մի պատկեր—
Նայում եր վրան:
Նա, վոր կանգնած եր
Ամբողջ հասակով,
Իսկ նրա շուրջը՝
Մասսաների ծոփ—
Լսում եր նրան:

Հուզված եր ինքը
Ամբիոնի վրա,
Շեշտով աջ ձեռքը
Նետել եր առաջ,
Վորի բռունցքում
Կեպին եր ճըմռած:
Ու թվում եր, թե
Մի պատկեր չեւ այդ
Իր դեմը կանգնած,
Այլ կենդանի մարդ...

Ցեղ լսեց նորից
Առաջին անգամ
Արմիկն այդ ուրը՝
— «Նայիր, բալիկ ջան,
Հրեն Լենինը».
Ու պատկերի հետ
Կասես թե մինը
Գալիս ե մեխում
Փոքրիկ Արմիկի
Փոքրիկ ուղեղում
Այդ մեծ անունը:

Տարիներ անցան
Եւ ուրից հետո.
Պիտներ դարձավ
Փոքրիկ Արմիկը,
Հետո՝ Կոմյերիտ,
Բայց պահում ե վառ
Մանուկ ուրից
Եւ դեմքը պայծառ
Նա իրա մտքում.
Ու միակ ձգտում
Ունի դրա հետ՝
Պատվով կրելու
Մեծ առաջնորդի
Անունն իր վրա.
Պատվով տանելու
Նրա դրոշմ,
Մինչև մի նոր, Մեծ
Հոկտեմբեր կգա:

ՅԵ. ԶԱՐԵՆՑ

ՄԱՀՎԱՆ ԲԱՅԼԵՐԳ

(Լենինի հիշատակին)

Մենք փող զարկինք և արձագանգն ահավոր
Յերկրից-յերկիր վորոտաձայն շառաչեց,
Յեվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր,
Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց:

Զնդաններում, խրճիթներում, հանքերում,
Ուր տառապած մարդն և հարթում իր ուղին—
Վոտքի յեկան ահագնագի զանգերով
Գնդերն անդուլ գործարանի ու հողի:

Յեվ վոտնաձայնը գնդերի ընթացող
Յեվ շառաչյունը զննքերի մահահոտ—
Խրճիթներում հնչեց վորպես մարտակոչ,
Պալատներում պայթեց իբրև մահվան բոթ:

Յեվ թափորի յեկած բոլոր գնդերի,
Բոլոր ըմբոստ բանակների առաջում—
Արդեն ննջած առաջնորդի պանծալի
Անձեռագործ դիակառքն էր շառաչում...

Յերթը ձգվեց հերոսական, փառավոր,
Յեվ կայծակներ շոնգալով շողացին,
Յեվ զրոշներ հազարավոր, բյուրավոր
Նրա վերև արնանման դողացին:

Յեվ լուռ ննջած առաջնորդի դադաղի
Յերթին յեկած բազմություններն այդ անահ
Յերդում տվին պ յթարելու կատաղի—
Մինչև վերջին, մինչև վերջին հաղթանակ...

Մենք փող զարկինք և արձագանգն ահավոր
Յերկրից-յերկիր վորոտաձայն շառաչեց,
Յեվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր
Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ

Աչքերդ կապույտ յեթերի նման

Յեվ հոգիդ շուշան,

Սիրտդ խորունկ ծով, ազնիվ, աննման,

Ընկեր Շահումյան:

Զայնդ զանգակի վսեմ մի դողանջ

Թափանցել գիտեր

Յեվ վոգեթրել շեշտով իր սքանչ

Վհատած սրտեր:

Խոսքդ չէր լուկ խոսք, այլ պատգամ հզոր,

Կայծակնող ու վառ,

Թշնամիներդ և մինչև այսօր

Քեզնից դողահար:

Դու հո չմեռար, նորից կյանք առար,

Յեվ հաղթ քո մահով

Ծլեց ու աճեց մի նոր գաղափար,

Փովեց աշխարհով:

Մահդ խթանող ցնցեց շատերին

Մեր կուռ շարքերում,

Ո՛ր, յեկ ու մի տես քո մարտիկներին

Կովի դաշտերում:

Քայլում են ահա հազար-հազարով—

Քո ճանապարհով,

Յեվ յերդվում քո տեղ վրեժդ լուծել.—

Դեհ, գնաս բարեզ...

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

ԲՈՐԻՍ ԶՆԵԼԱԶԵ

Ահավաստիկ այստեղ, Ալեքսանդրյան այգում,
Վոր կոչվում ե հիմա 26-ի անվան,—

Այս պատանին,

Անպարտ այս դեկավարը,

Պատվանդանի վրա բրոնզացել ե անմահ։—

Հայացքը դեմն հառած,

Դեպի անհուն հեռուն,

Կուրծքը տված գալիք մըրիկների թափին,

Հոկտեմբերի հրդեհը իր բիբերում՝

Նա նայում ե հեռուն,

Հեռուն,

Ուր ծագում ե մի նոր, անեղրական արփի։

Նա կանգնել ե հաստատ, այդ պատանին,—

Բրոնզացել ե, վորպես յերիտասարդ տիտան.—

Նա հիմնադիրն ե Վրաստանի

Լենինյան

Կոմ—

Յերիտ—

Միության։

Հիսուն հազար բրոնզյա ընկերների ձեռքով

Այս յերգեցիկ բրոնզում իր ընթացքը դրած—

Հերոսության, փառքի մի յերեկո

Նա բարձրացավ այս վեհ պատվանդանի վրա։—

Նա բարձրացավ հաստատ, ինքնավստահ,

Այնպես, ինչպես կյանքում դեռ վնչ մի ծեր,

Լեզենդական հերոս՝ իր նժույգին նստած՝

Փառքի պատվանդանին չի բարձրացել։—

Ուր եք դուք, հերոսներ, վոր ձեր փառքին վստահ,

Պատմության քառուղիներով, վորպես լեզենդ,

Անցնում եյիք՝ մարմարյա նժույգներին նստած՝

Գեղեցիկ ու սնամեջ ձեր փառքի հետ...

Ուր եք դուք, վոսկյա Աքիլլես և Պատրոկլես մարմար,
Ու արագագոտ Ուլիս — հով, փերի արքա...

Ահավասիկ բրոնզյա այս Աքիլլեսը,

Վորի Հոմերոսը դեռ պիտի գա։—

Դուք կործանեցիք հեքյաթի Տրովադան,

Յեվ յերգեցին դարեր ձեր գործերը ռազմի,—

Ահավասիկ սակայն մեր նոր Աքիլլեսը,

Վոր կործանեց Տրովադան կապիտալիզմի...

Նա կանգնած ե հաստատ։ Կուրծքը բաց,

Դեմքը քամուն տված, հայացքն հեռուն՝

Նա նայում ե պայծառ, ինչպես լուսաբացը

Իր հայրենի, հանդուգն իր լեռներում։

Նա կանգնած ե անպարտ։— Իր բրոնզաձուլ սրտով

Նա լսում ե տրոփը սրտերի բյուր—

Նա տեսնում ե իր դեմ՝ իր նման

Բրոնզադեմ պատանիների յերթը—

Այստեղ, իր շուրջը— և ամենուր։—

Նրա բանակը մեծ ե։— Վրաստանից մինչև

Ադվանստան, մինչև Հնդկաստան ու Ճավան,

Մինչև Հոնգ-Կոնգ, մինչև Ալխարհը նոր—

Ո՛ր, ամենուր, ուր կա աշխատանքի բանակ՝

Պայքարի յե յեկնում ամենուրեք անահ

Նրա բանակն ահա յերկաթակուռ։—

Այս չե՞ պատճառն արդյոք, վոր յերգում ե բրոնզը,

Վոր զնգում ե բրոնզը, վորպես քայլերգ,—

Այս զնգոցի ութմով պայքարներում գալիք

Միլիոնավոր բրոնզյա պատանիներ պիտի

Դեպի գրոհ քայլեն...

Յերբ բարձրանում եր նա՝ իր բրոնզը յերգում եր

Ընկերների վոսկյա յերակներում,—

Յեվ այդ պահից ահա նա անդադար յերգում ե,

Տարածվում ե յերգը հեռու։—

Յերգում ե բրոնզը
 Հիմա իր լեռներում,
 Յերգում ե հանքերում,
 Գործարաններում,
 Հնգամյա կի համար գոյամարտի յեւած
 Կոմյերիտ անթիվ գնդերում,
 Չինաստանի կարմիր դիրքերում,
 Յունգշտուրմի յերկաթյա շարքերում:—

Յերգում ե բրոնզը
 Յերկրից—յերկիր,—
 Բրոնզը յերգում ե
 Հերոսության յերգեր...

Ո, յերբ ե զնգացել ջահելությունն այսպես,
 Ինչպես այս բրոնզյա պատանին—
 Այստեղ—
 Կանգնած գրանիտյա իր պատվանդանին...

Սհավասիկ, պոետ, բրոնզի զնգոցը,
 Վոր դեռ յերկար պիտի այստեղ հնչե
 Յեվ աշխարհի բոլոր, բոլոր գոտիներից
 Միլոնավոր բրոնզյա պատանիների
 Հերոսության, փառքի ու պայքարի կանչե:—

Նա և՛ կյանք ե, և՛ յերգ ե, և՛ լեզունդ,—
 Այսպես ե զնգում բրոնզը, պոետ:—

II

ՍՈՑ-ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,

Ն Ո Ր Կ Ե Ն Ց Ա Ղ

Մ. ԴԱՐԲԻՆՑԱՆ

ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԸ

Մենք պիտոնք ենք — հարվածային բրիգադիր,
Լենին պապի պատգամներին ուշադիր.
Ով մեր թաղում անուսում է, անգրագետ,
Ամբողջ ձմեռ — պարապում ենք նրա հետ:

Մենք պիտոնք ենք — հարվածային բրիգադիր,
Ա խատում ենք, վորպես փորրիկ վորմնադիր,
Ամբողջ ձմեռն ուսանում ենք, ուսուցում,
Աշխատանքում — չունենք վնչ մի թերացում:

Մենք պիտոնք ենք — հարվածային բրիգադիր,
Մենք գալիս ենք — վորպես նորի հիմնադիր.
Հենց այս ձմեռ դարձել ենք սոցմրցակից,
Սոցիալիզմի սիրուն շենքին մասնակից:

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Պ Ա Տ Կ Ո Ր Ը

Իջավ գիշերն անդորր ու խաղաղ,
Հանգան գյուղական ճրագներն աղոտ.
Հանգիստ քայլերով լուռ ու մտադրաղ
Դարձավ իրենց տուն պիտոնք վաղին:

Վառեց լամպարը խրճիթում մթին,
Քնած մոր դեմքը գծվեց լույսի տակ.
Առանց խոսելու խոհեմ պատանին
Բացեց թերթերի կապոցը ստվար:

Կարդաց թերթերում լուրերն առորյա,
Կարդաց մեր թափը, վերելքը հսկա.
— «Վորքան հալթանակ, կառուցում վորքան»
Մեր խորհրդային մեծ յերկրի վրա:

Վերցրեց գրիչը, սկսեց խորհել...
Նա պետք է գրի մի թղթակցութիւն,
Թե ինչպե՞ս գոչուում կոչուող են կազմել,
Կուլակները Նոր դավեր են սարքում...

Վաղոյի միտքը կաթսա յի յեռուն,
Ծրագիրներով, հուզումներով լի,
Կուլակներն աշտո՞ր Նոր դավ են լարում,—
Բա պատկո՞ր Վաղոն ել վո՞նց համբերի:

Իրա գրածը նա լուռ ծրարեց...
Զարթել եր մայրը, նրան եր նայում.
«Այ վորդի, քնի՛ր, հերիք է գրես».—
Ու պառկեց վորդին մոտիկ անկողնում:

Ի. ԱՂԱԲԱԲ

ՅԵՐԳ ՈՒՅԺԻ ՄԱՍԻՆ

(Կարմիր բանակին)

Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես,
Հզոր է թափդ, թափդ ծովոդ,
Ուժգին է թափը, ափն է թովիչ.
Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Յերեկվա շատը՝ եսոր չնչին է,
Ենքան ճղճիմ է անցյալը խորթ,
Ու բեղմնալի յե թափը նորի.
Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Ուշժը մեր շատ է, ուշժը յերկաթ,
Նա միշտ հսկում է հավատարիմ,
Նա հավաքել է խիւղն ու հերը մեր
Մեր գյուղերից ու քաղաքներից...

Յերկաթի, հողի բանակներից
Ուշժը աճել է ու կուտակվել,
Այժմ դարձել է անհաղթելի,
Մեր կյանքի ամուր հիմքերի պես...

Ինչքան յեռանդ կա բազուկներում
Ու խինդ կա ենքան մեր սր ուներում,
Ենքան ցնծուն է ու միշտ անշեղ
Յերգը հաղթող մեր բանակներին:

Անտակ յեռանդ կա բազուկներում
Ու նա կանգնած է պատրաստ կովի,
Հակահարված տա՝ մեր թշնամուն.
Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՈՒՖԻ ՅԵՐԳԸ

Քաղաքից յեկան բանվորները,
Յեկան ու մեր սարը փորեցին.
Ամեն տեղ դինամիտ հորեցին,
Դողացին մեր հսկա լեռները:

Քանդեցին արագ,
Քանդեցին անդուլ.
Մուրճերն յերգեցին
Լեռների սրտում:

Գիշերում այն մութ
Բանվորներն արթուն,
Գտան մեր յերկրի
Սիրտը վարդագույն:

Քաղաքից բերին անիվ ու մոտոր,
Դողացին ծառի տերեղ, թուփը.
Զնգացին մուրճերն ու գնացին խոր.—
Յերեաց հանկարծ վարդագույն տուփը:

Ամոթխած հարսի պես հանկարծ ժպտաց
Վարդագույն դեմքով տուփը մեր սարի,
Մուրճերը մի պահ կանգ առան հանկարծ,
Վայրկյանը թվաց մի վոսկե տարի:

Նայեցին իրար բանվորներն ուրախ,
Բոլորի դեմքին ժպիտը խաղաց,—
Վառվեց խնդուկյան մի հսկա ալիք,
Նրանց սրտերում արյունը յեռաց։

Վայրկյաններ ուրախ՝ ժպիտներ վոսկի՝
Մահեցին նրանց դեմքերից անահ,—
Յեւ նորից անցան վոզեշուհ՝ գործի՝
Պայքարում արդեն հաղթանակ տարած։

Մուրճերը նորից հպարտ գնացի,
Գո, ծեցին ուրախ անիվ ու մոտոր,
Լ՝ ոններ հուզված ծանր տնքացին,
Զնգային մուրճերն ու գնացին խոր։

Բոլորս հուզված նայում ենք ճամբին,
Ամբոխն ել հառել իր աչքերը սուր,—
Բաց հորիզոնում յերևաց մի գիծ.
Զգում էինք մենք մի քաղցր սարսուռ։

Խարձրանում է գորշ մշուշը ծխի,
Ու տարածվում էր լայն դաշտի վրա,
Արշավում էր զիլ յերկաթե մի ձի,
Սըշավում էր նա...

Նայում ենք ուրախ, տեսքից սողում ենք,
Նա արագավազ, թափով գալիս է,—
Մեկը ահաբեկ կարծես լալիս է,
Նա մոտենում է.

Դողում է
Գետինը.

Զնգում են ռելսերը.—

Դողում են անից խրճիթներն ասես.
Պատի վրայից ցած լնկավ մի քար։

Դողում է մայրս, ծիծաղում եմ յես.—
Գալիս է դեմիս յեկաթե մի սար։
Ախ, թվ է այդպես յերկաթը հյուսել,
Ամեն մի կտորին տվել մի իմաստ...

Ել գուր է ապրում հրամաշ սելը,
Վոչ ել կտնքան յեզները հոգնած—

Ահա շարժում է յերկաթ ուսերը
Յեւ նա գալիս է մեր դաշտերով բաց։

Մեր գյուղի ծայրին խաբխած մի տուն
Յերերաց հանկարծ, փուլ յեկավ գետին.
Իսկ նրա դիմաց նոր տներ ժպտուն
Նայում են ուրախ գնացքի ճամբին։

Ո. Ք.

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Քանդում են, շինում են արագ
Մեր գյուղի ճամբան խորդուբորդ,
Բանում են բանվորներն արագ,
Քանդելով գետինը քաղքարոտ։

Մեր քանդվող ճամբեքի միջով
Կտանեն յերկաթի ռելսեր,
Յեւ այդ մեծ ռելսերի վրայով
Կսահի մեր գնացքը աներեր։

Ել վոչինչ պակաս չի լինի
Մեր հին ու խավար գյուղերին,
Կկապի մեր գյուղը, մեծ ու հին,
Գնացքը յեռացող քաղաքին։

Գ.

ՈՒՐԻՇ Ե ՀԻՄԱ

Կիսամեղրկ, մռայլ,
Աշնան պես գունամտ,
Քաղցի ճիրանում
Ուժասպառ, վհատ
Են գյուղն ել չկա,
Ուրիշ է հիմա...

Վոյնն դաշնակ աղի
Ճանկերում խեղդված,
Անլուր տանջանքից
Կենդանի թաղված
Են գյուղն ել չկան.
Ուրիշ է հիմա...

Յերբ կյանքը կարմիր
Այս վան ոբերում
Խեղագար թափով
Հոսում է, բաղվում՝
Են գյուղն ել չկան.
Ուրիշ է հիմա...

Հիմա գյուղերում
Այս նոր ոբերի
Ծիծաղ է, խնդում,
Բերքեր լի ու լի.
Արցունք ել չկան.
Ուրիշ է հիմա...

Դաշտերում տրակտոր,
Սրտերում հույզեր.
Ակումբ, լիկկայան,
Նորանոր մտքեր.
Խավարն ել չկան.
Ուրիշ է հիմա...

Տատը՝ անաստված,
Տղան կոմունիստ,
Թոռը կոմյերիտ,
Հարսը՝ ակտիվիստ...
Հին կյանքը չկան.
Ուրիշ է հիմա...

Գյուղում մեր սովետ՝
Ուրիշ է հիմա.
Ծլում են, ծաղկում
Կոլխոզ, կոմունա.
Մեր գյուղը սովետ—
Այսպես է հիմա...

Մ. ՆԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Ջանն իլիկ, թափիդ մատաղ,
Դու կրկին արագ դարձիր,
Իմ սիրտը՝ ջահել, ուրախ,
Քո յերգի բոցով խանձիր:

Հոսում է թելը արագ,
Լույսից ել պարզ ու պայծառ,
Գործում եմ անդուլ, անկանգ,
Յեռանդով վեհ, խանդավառ:

Գիտեմ, հաղթական մարտ է,
Կռվում ենք՝ համառ, հաստատ,
Յեւզ գիտեմ, վոր պիտ հաղթենք
Ու յեղենք մարտից անպարտ:

Ջանն, իլիկ, թափիդ մատաղ,
Դու կրկին արագ դարձիր,
Իմ սիրտը՝ ջահել, ուրախ,
Քո յերգի բոցով խանձիր:

Հ. ԱՂԱԲԱԲ

Լ Ե Ն Ի Ն

(Մանկական խաղ)

Բեմ, բեմի վրա 10—15 պիոներ

Նիմեղ.—

Ընկերներ,
Վոր հղախ է,
Յեկեք բառ մենք
Շրջան կազմենք,
Հիմա խաղանք
«Լենին»:

Լավ կարգ պահենք

Շատ չնայենք

Շրջանի նեղ

Ու լենին...

Պիոներներ.—

Ջան, ջան, խաղանք,

«Լենին» խաղա՛ք,

Շատ դուրեկան

Խաղ ե նոր,—

Համ լավ խաղ ե,

Համ ուրախ ե.

Խաղ կանենք մենք

Ամեն որ...

Նիկել.—

Դե, շուտ շրջան,

Ընկերներ ջան,

Բռնենք միմյանց

Ձեռքերը,

Ով չգիտե,

Թող նա դիտե—

Վոնց ե խաղում

Ընկերը:

Բոլորը (կաղմում են շրջան):

Կիմիկ —

Յես քո կողքին,

Նիկել.—

Յես քո կողքին,

Դե շուտ, Կիմիկ,

Ձեռքդ տուր.

Աենս.—

Յես ել քեզ մոտ.

Լուսիկ.—

Դե յեկ, Աշոտ,

Շուտ ձեռքդ տուր,

Ձեռքդ տուր:

Նիկել.— (Շրջան բռնած).

Ահա հասկես,

Նոր կյանքի պես,

Ամուր պահենք

Մեր շղթան.

Վոր ինքնակամ

Խորթ մարդ չգա,

Ներս չմտնի

Մեր շրջան...

Դպրոց. — (Պիոներուհին զանգահարում է բեմի մյուս անկյունից).

— Յես նոր դպրոցն եմ

Աշխատանքային՝

Վողջ նվիրվել եմ

Մեծ ապագային,

Դրոշմ Լենինն ե,

Ջահա՛ լենինիդ,

Վոր լույս ե սփռում

Ամբողջ աշխարհում:

Լուսաշխատանքի,

Կրթության գործում:

Յես եմ աշխատում

Ու անդուլ գործում:

Մեր մեծ ընկերոջ

Ավանդներն իմ մեջ

Հնչում են ուժգին,

Հնչում են անշեջ...

— Ինչ ել վոր լինի,

Լենինն ե ասել,—

Մեր առաջ ունենք

Մենք հսկա խնդիր,

Անգրագետ յերկրում

Յեվ վոչ մի դեպքում

Մենք չենք կառուցի

Մեզ մոտ սոցիալիզմ...

...Ու սովորեցնում եմ

Ահա ամենքին...

Շրջանի ընկերներ. — (Ծափ տալով)

Կեցցե՛ք ավանդը

Ընկեր Լենինի,

Նա պետք ե մեզ միշտ

Ուղեցույց լինի:

Դպրոց.—

Կեցցեք և դուք,
Ձեզ եր հատուկ
Սիրում, ընկեր
Իլիչը,
Դուք ել պետք է
Դառնաք՝ կյանքի
Լենինյան մեր
Գործիչը:

Գործարան. — (Պիտներ, բանվորի
հագուստով, բեմի մի ալ
անկյունից գործարանի սու-
լոցից հետո ասում է).

Յես մի հոյակապ
Նոր գործարան եմ,
Անթիվ գործերի
Յերկար շարան եմ...
Լենինն իմ շունչն է,
Լենինիզմը՝ կյանք,
Դրոշիս լողունգն է
Անդուլ աշխատանք:
Լենինի խոսքը
Նույնպես և իմ մեջ
Հնչում է ուժգին,
Հնչում է անվերջ...
— «Մեզ հարկավոր է,—
Լենինն է ասել,—
Դրսի ոգնության
Յերբեք չսպասել.
Հենց այսօրվանից
Բարձրացնել միշտ վեր՝
Արդյունաբերող
Վողջ ուժերը մեր»:
Մատուրս է գոռում,
Թեմենը ֆուռում...
Դինամի յերգը
Շուրջս է փովում...
Մեծ ինդուստրացման
Գովքը տարածում...

Շրջանի բնկերներ. — (Ծափ
տալով)

Կեցցե ավանդը
Ընկեր Լենինի,
Նա պետք է մեզ միշտ
Ուղեցույց լինի:

Գործարան. — Կեցցեք և դուք.
Դուք եք հատուկ
Մեր նոր կյանքի
Բույսերը,
Դուք մեզ համար
Կլինեք վառ—
Լենինյան վեհ
Հույսերը:

Տրակտոր. — (Մի պիտներ, գյուղա-
կան հագուստով, տրակտորի
ղեկը ձեռնին, սուլում է ու
ասում).

Յես տրակտոր եմ,
Շոգի շնչող եմ,
Յես վար եմ անում,
Բյուր գործ կատարում.
Մի տեսեք ապա՝
Իմ պոչին կապած
Յերկար շարքացան,
Ցանում եմ հնքան,
Վոր հերիք անի
Բերքը ես տարի
Թե մեր պետության
Հացամթերման
Յեվ թե մեր գյուղին:
Լենինը սիրտս է,
Ղեկս՝ լենինիզմ,
Լենինն է տվել
Ինձ մի մեծ դեր,
Վոր իրար կապեմ
Արտերը թիզ-թիզ:
Կառուցվի կոլխոզ
Հացի գործարան...
Ու աղոս-աղոս

Վարում եմ, վարում,
Աշնանացանի
Ցեկերն եմ շարում,
Աշխատում, խաղում:

Շրջանի ընկերները — (Ծափ տալով) .

Կեցցե՛ք ավանդը
Ընկեր լենինի,
Նա պետք է մեզ միշտ
Ուղեցույց լինի:

Տրակսը. —

Կեցցե՛ք և դուք.
Դուք եք հատուկ
Մեր նոր դյուղի
Գործիչը.
Ձեզ եր սիրում
Ու փայփայում
Մեր ուսուցիչ
Իլիչը:

Ելեկտրական — (Բեմի չորրորդ
անկյունից մի պիոներ մե-
քենավարի շորերով վառում
ե ելեքտրականը ու ասում) .

Յես ելեկտրական
Մի կայարան եմ,
Իմ ելեկտրական
Ուժը կտանեմ
Հազար ու մի տեղ
Հազար գործ կանեմ:
— «Ելեկտրական ուժ», —
Լենինն է ասել, —
Յեվ խորհրդային
Շինարարություն —
Կհավասարվի
Նա սոցիալիզմի:
Ու յես ձգտում եմ
Հատուկ յեռանդով
Ուժս տարածել
Հենց ամեն մի տեղ,

Իմ կայարանից
Գեղերի հանդով
Լույս մատակարարել
Մի գեղից մի գեղ...

Շրջանի ընկերները. — (Ծափ
տալով)

Կեցցե՛ք ավանդը
Ընկեր լենինի,
Նա պետք է մեզ միշտ
Ուղեցույց լինի

Ելեկտրական. —

Կեցցե՛ք և դուք
Մեր պատանի
Հերոսներ,
Մեծ ապագան
Մերոնք կտան
Ձեզ նվեր...

Ընկերները. — (Բոլորը ծափ են
տալիս) .

Կեցցե՛ք և խաղը
Ընկեր լենինի,
Թող սա մեզ համար
Որինակ լինի: —

Մանկական ինսերնացիոնալ. —

Մենք զավակներ ենք ազատ մարդկանց,
Ժրաջան կոմունայի ծաղիկ.
Հրաթե ազատությունը մեր առաջ
Բացեց իր այգին յերջանիկ...
Մենք ծաղիկ ենք ծաղկունքի
Յեվ ծիլեր նոր կյանքի.
Ալ կակաչ ենք զարուհի
Յեվ վառ բոցը հուր-կրակի:

(Վարագույրը լողալով իջնում է)

ՀԱԿ. ԱՂԱԲԱԲ

ՄԱՅԻՍՅԱՆ ՈՒՂԻ

(Պատիկ պոեմ)

Արևը շողեց
Վառ ճառագայթներ,
Կարմիր լույս սփռեց
Քաղաք ու գյուղին,
Լուսաշող փուլեց
Նոր կյանքի ուղին...
Մայիսյան ուղին
Լուսաշող պայծառ,
Լուսաշող պայծառ
Մի ծայրից մի ծայր:

Ամեն մի լույսը՝
Մի փայլուն գոհար,
Ումը վոր հասավ՝
Ճակատին թառեց,
Աղջկա-տղի
Կրծքերի վրա,
Մի-մի արվլան
Արևիկ վառեց,
Պիոներ արեց,
Ճակատին թառեց,
Մայիսյան վոգով
Սրտերը վառեց:

Այ, են վառ շողը՝
Ճիշտ մեր Արփիկն է.
Արփիկ նման
Աշխույժ, թավառ,
Են ել հենց ինքը
Մեր ժիր մարտիկն է,
Կարմիր բոցի պես,
Վառ ու վառվռուն:

Հրեն և մի փունջ
Աղամանդ շողեր
Վազում են առաջ,

Իրար հետ մրցում,
Լեռների ձյունոտ
Բարձունքը թողել՝
Մեկ-մեկուց արագ
Առաջ են թռչում:

— Են հուր, Հրանտն է,
Ես նուռ նվարդը,
Են ալ-Ալմիկն է,
Ես ել Համիկը...
Են լուս-Լուսիկն է,
Ես հույս-Հուսիկը,
Են կրակ-Կարոն,
Ես մեկն ել Մարոն...

— Ե՛յ դուք, վառ շողեր,
Արևի ցողեր,—
Հենց ձեզ եմ ասում—
Եդ հուր եք վազում
Դուք եղպես վաղ վաղ
Ու եղպես ուրախ...

— Դեպի գյուղ, ընկեր,
Այո, դեպի գյուղ,
Դեպի գյուղացու
Ամենայն մի հյուղ—
Գնում ենք շունչ տանք
Ցանած աղոսին,
Հույս տանք գյուղացուն,
Ապրեցնենք նրանց...
Չե՞ վոր ենտեղի
Մանուշն ու Մոսին
Մեր ընկերներն են,
Մեզ հետ են սրտանց:

— Ե՛յ, հրո ցուրեր,
Արևի գործեր,
Ինչ եք վազում,
Եդ հուր եք վազում
Դուք եղպես կանուխ
Եղպես աներկյուղ...

— Մենք... դեպի քաղաք,
 Բանվորների տուն.
 Ենտեղ մայիսյան
 Կարմիր ենք կապում,
 Նոր կյանքի կամար
 Ամենքի համար.
 Ամեն մի բանվոր
 Կամարի մեջտեղ
 Մեծ աշխատանքի
 Մի զարդ է շքեղ...
 Բանվոր-գյուղացին
 Կյանքն են աշխարհի,
 Բանվոր-գյուղացու
 Ուժը վիթխարի...

ՀՈՒՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԻԳԱՆՏՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գիգանտներով բետոնե
 Մեր վողջ յերկիրն ենք զոտկել...
 Հեռու, հեռու Ուրալում
 Մագնիտոստրոյ և չուգուն,
 Ուր քամին եր խուլ վոռնում,
 Սկսվեց մեծ կառուցում.—
 Հարվածային շարքերով
 Կառուցում են
 Մագնիտոստրոյ:

Դոմնան յերախն և բացում,
 Չուգուն և հանք ե լափում,
 Բոց է շնչում, բոց անշնջ՝
 Լայն թորերով նա անվերջ...
 Յեվ փոխարեն տալիս մեզ
 Մի պողպատե նոր ձուլվածք.
 Վողջ յերկիրը պողպատով
 Կապահովի նա շուտով...

Կա մի ուրիշ կառուցում
 Թուրքեստանում, Սիբիրում.
 Թուրքեստանը անապատ,
 Ճանփան ավաղ եր, անհարթ.
 Դանդաղաշարժ ուղտերով
 Անցնում եյին ավաղով,
 Յեվ ավաղով եր ծածկվում
 Վողջ բամբակը դաշտերում:

Թուրքեստանից մինչև Սիբիր
 Ձգվեց ճանփա մի անձիր.
 Սկսվեց հսկա կառուցում,
 Հարվածային շարքերով
 Կառուցեցին
 Թուրքսիբ...

Անապատում, ավաղում
 Ահա ռելսեր են փայլում.
 Շոգեշարժը վրայով
 Սլանում է փնջալով,
 Բամբակ տանում այստեղից
 Յեվ հաց բերում Սիբիրից,
 Բամբակ հասցնում զավողին,
 Վոր չիթ լինի ամենքին:

Ահա ուրիշ մի գիգանտ,
 Վոր կողերով իր անհաղթ
 Հսկա գետն է շղթայել,
 Թափը փոխել և սանձել՝
 Ուր Դընեպրը՝ մի գազան՝
 Փրփրում եր նա դաժան,
 Մեծ նավեր եր խորտակում,
 Սկսվեց հսկա կառուցում.
 Հարվածային շարքերով
 Կառուցեցին
 Դնեպրոստրոյ...

Յեվ բարձրացավ մի կայան,
 Վոր լույս սփռեց անսահման,
 Ու նոր ճամփով ընթացավ

Դնեպր գետը համարձակ,
Տուրբինների վրայով,
Ելեկտրական լարերով,
Մեքենայի սիրտն անշարժ
Աշխատեցրեց թափով վարժ.
Շուրջը վորքան զավոզներ,
Վերասըլաց նոր շենքեր:
Վորքան, վորքան զիգանտներ
Մեր վողջ յերկիրն են գոտկել.
Հնգամյակն ենք ավարտում
Հաղթանակով Հորս տարում:

ԱԼԱԶԱՆ

ՆՈՒՇԻԿԻՆ

Դու կարդացիր ա տառը
Հնգամյակումն առաջին,
Մուտք գործեցիր այս դարը—
Մաքրությամբ քո ջինջ:

Դու Լենին ես իմանում
Ու Ստալին, ու գրոհ.
Իմ խլրտուն մանուկ
Պայծառ աչքերով:

Դու մտնում ես այս դարը—
Նայվածքով քո ջինջ,
Դեպի վերջին կատարը—
Հասունացիր, աճիր:

ԱԼԱԶԱՆ

Փ Ա Ր Ո Ս

Հայրը նրա՝ բանվոր ե հասարակ,
Բանում ե քաղաքի մի գործարանում.
Պապն ել ե բանվոր, հասակը առած,
Ինքը՝ թուրք, կենսուրախ մանուկ:

Ծնվեց նա քաղաքումն այս խորհրդային,
Պիոներ ողակը «մկրտեց» նրան,
Տունն իրենց ամբողջ—բանվոր, կոմունիստ,
Իսկ իր գլխարկին՝ «Պիոներ» ե գրած:

«Մկրտեց» նրան պիոներ ողակը,
Անունը՝ Փանոսի տեղ դրեց Փարոս,
Բանվորական ակումբը նրան կեցցե զոռաց
Ու մուզիկան հնչեց յերգ ու բարով:

Աչքերն իր բացեց խաժ ու հուրհրան,
Պատից կախած տեսավ մի հրացան,
Լենին ու Ստալին տեսավ պատի վրա,
Յեւ այլ նկարներ պատին ցիր ու ցան:

Դարձել ե արդեն յերկու տարեկան,
Խոսում ե անկապ, թոթով ու կիսատ,
Նրան մոտիկ են, այնքան բարեկամ—
Խաղալիքները, «Մաման» ու «Նեկին բիձան»:

Թռչկոտում ե ընկերների հետ իր դրացի,
Քայլում ե աշխույժ մեկ,— «մեկ, ուկու, մեկ»,—
Կոպերը շողուն—շիթերով լացի,—
Խառնում ե իրար խոսք, ծիծաղ ու յերգ:

* * *

Հայրը նրա բանվոր ե հասարակ,
Բանում ե քաղաքի մի գործարանում,
Պապն ել ե բանվոր, հասակը առած,
Նա հոկտեմբերյան կենսուրախ մանուկ:

ԱԼԱԶԱՆ

Ա Ռ Ա Վ Ո Տ

Նորից արեն յելավ, վառեց գույն ու կրակ,
Նորից մայթերը մեր—տրոփում են, թնդում,
Լույս թեւերն իր փռեց մեր սարերի վրա
Խորհրդային կապույտ առավոտը խնդուն:

Գործարանի դռան հուրհրատող աչքեր,
Կենսաժպիտ դեմքեր բանվոր ընկերներին:
— Մենք պատրաստ ենք, յեկանք, յերբ սուլիչը կանչեց,
Յերբ արևը յերգեց ազատ մեր լեռներին:

—
Նորից վառ-վառ դեմքեր ու հայացքներ՝ տաք.
Նորից կաշվե բաճկոն ու մրոտված կեպի,
Առավոտվա պես ջերմ ու արևից ել բարկ —
Մեր բանակն և պատրաստ՝ մարտի, աշխատանքի:

—
Այդ մեր բանակն և կուռ, մեր կրծքերը յերկաթ
Բետոնից ել ամուր՝ առած ուժ ու մարմին,
Մեր բազուկներն են կոշտ, մեր ճակատն և հպարտ,
Վոր չընկճեց յերբեք և վնչ մի թշնամի:

—
Նորից արևն և վառ: Նորից գույն ու կրակ,
Նորից մայթերը մեր—տրոփում են, թնդում:
Շառաչելով բացվեց մեր սարերի վրա
Խորհրդային պայծառ առավոտը խնդուն:

ՆՈՐ ԿԵՆՑԱՂԸ

(Ըստ Լեռեդեի)

Հին կենցաղը
Կքանդենք,
Նորը, նորը
Կհիմնենք...

Յիփեյ, կարել,
Կարկատել՝
Կնոջ կյանքն և
Միշտ յեղել...

Խոհանոցում, ամեն ուր,
Առավոտից՝ իրիկուն,
Մրի, միսի ամպիրում
Մեր մայրիկն երա խտտում:

Մերթ խոհարար,
Կար անող,
Լվացարար,
Հարթուկող.

Յեփեյ, կարել,
Կարկատել՝
Կնոջ կյանքն և
Միշտ յեղել...

Այդպես յերկար տարիներ
Մեր մայրիկն և տառապել.
Բայց չկա ել վերադարձ
Այդ կենցաղին՝ հին, փտած:

Մեծ գործարան-խոհանոց
Մեջը շոգի ու հնոց,
Հազար հոգի ել ուզի,
Կկշտանա, կսընվի:

Ահա և նոր լվացքատուն,
Լվանում ե, հարթուկում,
Մեքենաները այնտեղ՝
Պտտվում են սրաթև
Խնչպես արագ ու թեթև...

Ահա հացի մեծ զավող,
Հաց ե թխում ամեն ուր,
Խմոր հունցում տասնյակ տոնն,
Կշտացնում և վողջ ռայոն:

Հրապարակում մանկական
Վորքան մանուկ զվարթաձայն
Խաղ են անում, վազվզում,
Խնամվում ու մեծանում...
Ահա և ձեզ նոր կենցաղ՝
Նժրը, նժրը մեր անհաղթ...

* * *

Յեւ մայրիկը մեր աղատ
Դուրս ե յեկել հրապարակ,
Հինն ե քանդում հիմնովին,
Մասնակցում ե նոր կյանքին—
Մարտի ութի մեծ տոնին

Ռուս.՝ Հռ. Պոդ.

ԳԵՎՈՐԳ ԽԱԼԱԹ

Կ Ո Մ Ս Ո Մ Ո Ւ Ի Ա

Ջահելություն՝ յեւոդ որ,
Պայծառ, պայծառ ու հստակ,
Աշխատանքում հաղթող, նոր,
Հաղթանակով քո վստահ:

Միլիոնների կուռ բանակ,
Լենինիզմով ղրահավոր.
Պատվի գործի հաղթանակ,
Կապիտալին՝ անավոր:

Ուր ել նայենք, ահա, կա.
Մեր զաշտերի բեղուն հունդ,
Ջավոդներում մեր հսկա,
Հարվածային նոր սերունդ:

Կռիվներում գալիքի,
Մեծ ընկերոջ շարքերում,
Դու քո դիրքը չես լքի
Սոցիալիզմի գիրքերում:

Կոմսոմոլյան, ջահել յերթ,
Տոկուն կամք ես, պիրկ մկան,
Լենինիզմը՝ քեզ կուռ զենք,
Քոնն ե, քոնն ե ապագան:

Գ. ԽԱԼԱԹ

ՄԱԳՆԻՏՈԳՈՐՍԿ

— Մագնիտոգորսկում, Կարլեն ջան, գիտե՞ս
Հալոցն առաջին գործում ե արդեն.
Որը հազար տոնն թուջ ե տալիս մեզ,
Վոր յերկրի համար ձուլվածք պատրաստենք:

— Մագնիտոգորսկը վճրտեղ ե, հայրիկ.
— Հեո՛ւ՝ Ուրալում, ցրտում ու բուքում...
— Վճճն ես կառուցել այն ցրտում մարդիկ.
— Սոցմրցման տապով, կամքով աննկուն:

— Ելի՞ յեն շինում այդպես ահագին
Քաղաք-գործարան, հայրիկ ջան, ասա...
— Այո՛, Կարլեն ջան, Կուզբաս ու Տագիլ,
Վոր սոցիալիզմին շուտ հասնի մասսան:

— Մենք ել ենք ուզում գործարան շինել,
Մագնիտոգորսկի նման մի հսկա,
Ու սոցիալիզմի կառուցող լինել,
Վոր վողջ աշխարհը մեր ճամփովը գա:

Հ. ՆՈՐԱՅՐ

ԿՈԼԽՈՋՆԻԿ ՄՈՐՍ

Նամակ եմ գրում, մայր իմ թանկագին,
Կոլխոզնիկ գյուղին ու քեզ շատ բարե.
Կոլխոզ ես մտել, իմ սիրտն ես հուզել —
Կոմյերիտ վորդուդ նոր խինդ պատճառել...

Դպրոց ես գնում, կարդալ սովորում,
Ուղարկած նամակդ ձեռքովի ես գրում,
Գրածները քո՛ւ, մայր իմ կոլխոզնիկ,
Սրտումս կարմիր քուրա յեն վառում:

Իմ մասին, մայրիկ, շատ բան պիտ ասեմ.
Առաջ եմ քաշվել, բանֆակ եմ գնում,
Դազգյահիս յերգը գնգում ե, գնգում,
Ու նրա թափից սիրտս ե թռվում...

Մայրիկ, բարեիր քրոջս դեռահաս,
Ու կոլխոզ-նախագահ բաարակ Գևորգին,
Ասա, վոր շուտով անիվի ընկեր՝
Կոմյերիտ տղես կոլխոզ ե գալու:

Կոլխոզ ե գալու բանբրիգադի հետ,
Կալսոդ մեքենա, մատուռ բերելու:
Հասուն արտերի կոլեկտիվ սրտին
Գործարանից շատ սիրով վողջույն...

Գ. ՍԱՐՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Պայծառացիր, այ առավոտ,
Յերկիր, խմիր ցուքն արևի,
Կյանք առնեն թող արտ ու արոտ
Յեւ այգիները խաղողի:

Մեր արտերում համայնական
Թող հնչե յերգը լիաթոք,
Փող հնչի թող իմ հաղթական,
Իմ նոր յերկրում արևակող:

Վոսկի հասկեր, վոսկի բերքով,
Բամբակ լինի— ձյունի սավան,
Վողկույղները քաղվեն յերգով՝
Այգիներու մ համայնական:

Պայծառացիր, այ առավոտ,
Պայծառացիր ու արևիր,
Մեր դաշտերը համայնական
Սպասում են քո բարեին:

Գ. ՍԵՍՅԱՆ

ԳԱՐՈՒՆ

Նոր գարունի որեր յեկան.
Նորից սիրուն՝ ինչպես առաջ.
Ծառն ու ծաղիկ նախշուն հագան.
Դաշտ ու արոտ նորից կանաչ:

Աշխատանքը նորից յեռաց—
Ծառ ու ծաղիկն մեղու, թիթեռ.
Վոսկի շողոփն արևի վառ՝
Փողոց ու դաշտ լի մանուկներ:

Դուք նոր կյանքի շողն ու ծաղիկ,
Մեր գարունքի գարունն եք դուք.
Հին, թառամող կյանքի ծառին
Նոր ընծյուղներ՝ սիրուն մանկունք:

Ձեր աշխուժով կյանքը լցրեք՝
Նման չըլնի, թող, նա հին.
Արև՝ առեք, արև՝ դառեք,
Դարձն դառեք նոր գարունին:

Ս. ԴՈՒՐ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՅԵՐԳ

Մեր հայրերը
Մաքառել են
Դուռ մարտերում,
Կովել են բյուր թշնամու դեմ.
Մեր սրտերում հիմա վառվող
Կյանքն ե յեռում.
Մենք ծնվել ենք
Պայքարների
Մեծ որերին:

Մենք սերունդն ենք

Հաղթանակող

Սոցիալիզմի.

Մենք կռվում ենք մեր մեծ կյանքի

Գործի համար.

Մեր մեծ ճամբով, բայց դժվարին,

Վերապես ռազմիկ

Մենք քայլում ենք մեր յերգերով

Նոր ու պայծառ:

Մենք յեկել ենք

Նոր ու յժերով

Մեծ պայքարի՝

Վեհ գիտության հիմունքներին

Տիրանալու.

Մենք յեկել ենք

Անհատական

Մրցակցության՝

Դպրոցներում, ջոկատներում,

Հարվածային ուսուցումով,

Գիտակցությամբ

Մենք ցույց կտանք

Մեր ույժը մեծ,

Հզոր ու հաղթ:

Մեր հայրերը

Մաքառել են

Գոռ մարտերում,

Կռվել են բյուր թշնամու դեմ

Մեր սրտերում հիմա վառվող

Կյանքն է յեռում.

Մենք ծնվել ենք

Պայքարների

Մեծ որերին:

Ռ. ԱՂԱԲԱԲ

ԼԱԳԵՐԻ ՅԵՐԳԸ

Հանդերը չալ են կապել,

Արևը ալ է հագել,—

Ամառ է, ջան, ամառ է.

Սարերի փեշին լազեր...

Ճամփեքը փռին վրեն,

Մեր ավտոն շողի վրեն...

Թռչում է, ջան, թռչում է

Հանդերի դողի վրեն...

Հրեն սարերի տակին,

Մոտիկ աղբյուրի ափին,

Լազերը, ջան, լազերը,

Տես, տալիս է սիպտակին...

Կակաչը արտի միջին,

Արտը զարդի միջին,

Պիոներ, ջան պիոներ,

Կակաչ՝ նոր կյանքի միջին...

Հանդերի լեն ծոցի մեջ,

Արևի են բոցի մեջ,

Ողակ եմ, ջան, ողակ եմ,

Ամբացիր ծաղկոցի մեջ...

Հանգստի խաղաղ ժամին

Սվավա թող հով քամին,

Կռկռվի, ջան կռկռվի,

Առողջ ես դու, կուռ մարմին:

Թնդա թափով, իմ նոր յերգ,

Լազերավոր պիոներ,

Պատրաստ ես, ջան, պատրաստ ես

Կռվի համար անվեհեր:

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳ

„ՀԻՄԻ ՄԵԾ ԵՄ, ԶԵ“...

Փողերը զիւ փչելով,
Դրոշները ավծածան,
Թմբուկները զարկելով
Յերգում եյին քաղցրաձայն:

Յերգում եյին ու անցնում
Պատկոմները կենսութաւ,
Շուրջը փռում հիացում,
Շուրջը անուշ խաղ ու տաղ...

Ու չորսամյա իմ բալեն,
Շտապ, շտապ հեւալեն,
Դուրս եր թռչում սենյակից,
Ընկնում նրանց յետևից:

Լաց ու կոծով, աղմուկով
Բերում եյինք նրան տուն.
Հազար ձեռով ու խոսքով
Լույս աչերին բերում քուն:

Բայց մի որ ել, ասացինք,
Թե՛ փոքրիկ ես, ա՛յ բալիկ,
Վոր մի քիչ ել մեծանաս,
Հետո պատկոմ կդառնաս:

Ու ամեն որ, ամեն որ,
Հենց վոր քնից արթնանար,
Ուրախ դեմքով բախտավոր,
Կհարցըներ անդադար. —

«Հիմի մեծ եմ, չէ, շատ մեծ...»
Ու մեր «վոչից» կղողար.
Աչիկներում են պեծ. պեծ,
Արցունքները կշողար...

Անցան, անցան շատ որեր,
Անցան շաբաթ ու ամիս,
Բայց նա համառ, աներեր.
Միշտ նույն հարցն եր ինձ տալիս:

Հիմի մեծ ե իմ բալեն,
Գեղածիծաղ են լալեն.
Ուրախ, խնդուն, յերջանիկ
Կոմունար ե մի փոքրիկ:

Կարմիր վզնոց ունի նա,
Կրծքին փոքրիկ մի Լենին.
Ու ժպտում ե բախտավոր,
Ու ցույց տալիս ամենքին:

ՅԵ. ԶԱՐԵՆՑ

ՄԻ ՀՈԿՏԵՍԲԵՐԻԿԻ

Արև ունես քո աչքերում,
Քո աչքերում, քո ձեռքերում,
Քո այդ փամփուլի թաթիկներում,
Քո խատուտիկ աչիկներում:—
Քո խատուտիկ աչիկներով
Պիտի նայես մի որ հեռուն,
Դրոշ պիտի պահես մի որ
Քո ամրացած թաթիկներում,—
Ու չմարող իմ յերգերով
Պիտի գնաս դեպի գրոհ...

ՅԵ. ԶԱՐԵՆՑ

ԳԱՆԳՐԱՆԵՐ ՏՂԱՆ

Փակում եմ հոգնած աչքերս մի պահ
Յեվ տեսնում եմ յես—այնքան, այնքան պարզ.—
Գալիք մի գարուն, վառ մի որ ահա,
Յերկիրքը կապույտ, որը հրավարս:

Արևը արդեն բարձրացել է քիչ,
 Զնգում է որը, ինչպես յերգենոն—
 Ու կապույտ, կապույտ, կապույտ յերկնքից
 Թափում է կարծես յերգ ու խնդություն։—

Վոլորապտույտ ձգվում է շոսսեն
 Նոր Յերևանից դեպի Արարատ.
 Ինչքան են արդյոք տարիներ հոսել
 Մինչ դարձանային այս որը զվարթ։

Շոսսեյի յերկու կողմերում ահա
 Տներ, փողոցներ ու գործարաններ,
 Կանաչ պարտեզներ, ծաղիկներ առատ,—
 Այդ հիվ է արդյոք այսքանը ցանկի։

Ընկած են տներն իրարից հեռու,
 Գործարանները մեջընդմեջ կեցած,
 Վոչ ծուխ, վոչ փոշի.— և լույս տներում—
 Ժիր մարդիկ ահա՝ դեմքերին ծիծաղ։

Յեկած արթնացող քաղաքից՝ ահա
 Վոլորապտույտ շոսսեյով այդ լայն,
 Առջևում կարմիր մի դրոշ պահած՝
 Անցնում է վաշտը պիոներական։

Հնչում է նրանց դուփյունը հաստատ,
 Թմբուկն է թնդում ութթմով կորովի,
 Անցնում են նրանք քայլերով վստահ,
 Աչքերով հստակ, դեմքերով թովիչ։—

Քայլում են նրանք շոսսեյով, հետո
 Կտրելով այդ լայն, ասֆալտե շոսսեն՝
 Անցնում են ահա այն ձորի մոտով,
 Ուր աղմկածայն Զանգուն է հոսում։

Զանգուն է հոսում ներքևում զվարթ,
 Հստակ ջրերով անվերջ կարկաչում,
 Իսկ այնտեղ ահա—մի հին ցանկապատ
 Ու քարեր՝ ընկած կանաչի միջում։—

Քարեր, հին քարեր, վաղուց մոռացված,
 Անանուն, անգիր, ննջում են այնտեղ,

Ուր լռությունն է իշխում, ահասատ
 Ու հուշն է թռչում՝ հավիտյան անթև։

Ժպտում է վերից յերկինքը կապույտ,
 Արևն է զնգում անհուն զնդոցով,
 Յեվ վաշտն է անցնում քայլերով անփույթ,
 Արբած արևի կենսատու բոցով։

Հնչում է նրանց դուփյունը հաստատ,
 Թմբուկն է թնդում աշխուժով մի ժիր,
 Յեվ մանուկների աչքերում նստած՝
 Գարունն է ժպտում արևի ուժին։—

Անցնում են նրանք ծիծաղով հնչուն
 Այդ անխոս, այդ հին քարերի մոտով,
 Նրանց ծիծաղում կյանքն է կարկաչում,
 Գարունն է կանչում անափ կարոտով։

Անցնում են նրանք։— Ու նրանց յերթից,
 Աչքերը հառած քարերին խաղաղ՝
 Հանկարծ բաժանվում ու մղտ է գալիս
 Մի կապուտաչյա, գանգրահեր տղա։—

Պիոներական փողկապը վզին,
 Վոտները մինչև ծունկերը բորիկ,
 Ճակատը բարձր, աչքերը լուսե,
 Հաղին սպիտակ, կապտերիզ շապիկ,—

Նայում է նա ջինջ, պայծառ աչքերով
 Գերեզմանատան քարերին մի պահ,
 Հետո կարծրացած փոշին է քերում
 Նա մի հին քարի վրայից ահա։

Նայում է ապա նա փոշոտ քարին
 Աղեղանման հոնքերի տակով...
 Դրված է վրան.— «Յեղիշե Զարենց,
 Բանաստեղծ, ծնված Մակու քաղաքում»։

Կարդում է նա իր աչքերով ծավի,
 Ժպտում է, հիշում կարծես ինչ-վոր բան,
 Քաղում է ապա մի կանաչ բաղեղ—
 Ու շարունակում իր թողած ճամփան։

Ծիծաղով հնչուն ու արծաթաձայն
Միանում ե նա կրկին շարքերին—
Յեվ հուշի նման հավիտյան անցած,
Մնում ե հանդուժմ մի կորած շիրիմ...

.....
Լսում ես՝ այդտեղ իմ սիրտն ե թաղած,—
Կոխոտիք նրան քայլերով քո լույս,
Ո, դժ, գալիքի գանգրահեր տղա,
Մեր լավ գալիքի վոսկենհեր մանուկ...

ՅԵՐԳ ՊԻՈՆԵՐ ԱՐՐՈՍԻՄՈՎԻ ՄԱՍԻՆ

Ռեւսի կողքով, զառիվայրով,
Իրենց գյուղից ուրիշ գյուղ,
Մի պիտոներ արագ քայլով
Դեպի դպրոց եր դիմում:

Իսկ ռեւսերով հեռուններից,
Մարգագետնով, անտառով,
Մի ճեպլնթաց մեծ քաղաքից
Մոտենում եր սուլելով...

Ու եղ ճամփին մեկ ել հանկարծ
Կանգնեց փոքրիկ պիտոներ.
Նկատել եր ճամփեն քանդված,
Ծոված պողպատ զույգ ռեւսեր...

Դա նշան եր կործանումի,
Ճամփի վերջն եր հենց այստեղ,
Ու կանգնում ե առանց ահի՝
Փոքրիկ ճարպիկ պիտոներ:

Նույն վայրկյանին, նա վճռական
Կարմիր փողկապն ե քանդում,
Իբրեւ դրոշ ալեծածան,
Դեպի վերե ե պարզում:

Չտեսնված սլաքավար՝
Ահա կանգնել ե ճամփին,
Դրոշակն ե պարզել իր վառ՝
Ազդանշան գնացքին:

Յեվ գնացքը կանգնեց հանկարծ,
Ցնցվեց ամբողջ մարմնով,
Կանգնեց մոտիկ ճամփից քանդված,
Ծուխ արձակեց փնջալով:

Գործիքները վողջ հանեցին,
Ռեւսը նորից միացավ,
Քանդած գիծը նորոգեցին,
Նորից շարժվեց ու թռավ...

Իսկ ռեւսերով, զառիվայրով,
Իրենց գյուղից ուրիշ գյուղ,
Մի պիտոներ արագ քայլով
Դեպի դպրոց եր դիմում:

Այո, այս նոր սերունդի հետ
Ձի գլորվի ռեւսից ցած
Բոլշեիկյան մեր Լենինյան
Մեծ գնացքը ճեպլնթաց:
Թարգմ. Հ. Պող.

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Նա աշխույժ ե—փոքրիկ տղան,
Իսկ թևի տակ —
Մի պայուսակ,
Վոր շատ ամուր ե խնամքով
Կապկպել ե նա փոկերով:

Թշկները կարմրատակել,
Նրանց վրա
Ալ դրոշն ե արտացոլել,
Ու հարցրի—
— Դե ինձ տա,
Փոքրիկ բալա,

Ո՞ւր ես քայլում

Այս ծիսացող

Ու մեծ որին

Այդպես արագ:

Պատասխանեց.

— Դեպ հնգամյակ,

Դեպ կառուցում,

Դեպի ուսում...

Յես ասեցի,

— Քո խոսքերը լուրջ են հնչում,

Սպասիր, մի կանգ առ, հապա

Յեվ անունդ ի՞նչ ե, ասա,

Դու իմ խելոք, փոքրիկ բալա,

Ժիր, անհամբեր:

Պատասխանեց՝

— Հոկտեմբեր...

Թարգմ. Հո. Պող.

ՄԻՐԱՔ ՄԻՐԱՔՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԻՆ

Քո արևահար հուր աչքերում,

Բացված կակաչ դեմքիդ փոքրիկ,

Մեր նոր յերկրի խինդն ե փայլում,

Նորաբողբոջ հոկտեմբերիկ:

Միրտդ խնդուն, հույզերով լի,

Վառված դեմքիդ ժպիտ կա մի.

Գալիք կյանքի կերտողը ժիր՝

Դու, զավակ մեծ Հոկտեմբերի:

Տեսնում ես դու յերկիրը մեր,

Վոր աճում ե քեզ պես ժպտուն,

Նոր հաղթական թափ ե ատեր,

Ջահ ե վառել ու խնդություն:

Քո աչք ձկուն մկաններում

Ույժն ե կիտված ապագայի.

Անծայրածիր մեր նոր յերկրում

Փողն ե հնչում Հոկտեմբերի:

Քո արևոտ աչիկներում

Ու վառ դեմքիդ՝ փոքրիկ, փոքրիկ,

Մեր նոր յերկրի խինդն ե փայլում,

Կարմրափողկապ հոկտեմբերիկ:

ԶՈՐՍ ՍԵՐՈՒՆԴ

Ավագ յեղբայր ունեմ յես,

Նա զինվոր ե բանակում.

Յեվ զլիարկին, կայծի պես.

Կարմիր աստղն ե փայլելում:

Մյուս յեղբայրս, կոմյերիտ,

Ժողովներ ե հաճախում

Ու իր կրծքին լայնանիստ

«Կիմ»-ի նշան ե կրում:

Մեծ քույր ունեմ պիոներ՝

Կոլեկտիվի սիրելին,

Ճառագայթից վառվուռն

Փողկապ ունի նա վզին:

Իսկ յես փոքր եմ բոլորից,

Մանկապարտեզ եմ գնում...

Հոկտեմբերիկ են ասում ինձ,

Շարքում ուղիղ եմ քայլում:

Հենց վոր նշան կպցրի յես,

Ջգացի, վոր շատ մեծացա...

Թեև փոքր եմ յես ձեզ պես,

Յեղբայրներիս շարքն անցա:

Թարգմ. ուս. Հո. Պող.

ՊԻՈՆՆԵՐԻ ԹՄԲՈՒԿԸ

Զուգվել ե անտառը, մի նայիր,
 Փթթել ե, աճել ու բուրում.
 Մենք պիոններն եր-պատանի
 Յերգելով լազեր ենք դիմում:

Տես, ինչպես յեռում ու հեռում ե
 Մեր յետև քաղաքը հսկա,
 Հէյ, զնգա, թմբուկ մեր, թմբուկ մեր,
 Դու թափով ու ուրախ թնդա:

Մեկ,

Յերկու,

Յերեք,

Քայլ առ քայլ դիմենք...

Փոխ. ուռներենից

Գ. ՄԱՍԼՈՎ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Աճում ե մի սերունդ աներեր,
 փայլում ե սերունդն այդ ու դյուլթում,
 ծնվում են դեռ նորեր ու նորեր,
 ծաղկում ենք վարդի պես ու փթթում:

Ծփում ե փրփրան ծովի պես,
 կռում ե կենցաղը նորածին,
 վոր վաղը հաղթական, ժպտերես
 ամենուր թևերն իր տարածի:

Սիրում եմ պալքարն այդ տենդային,
 սերունդն այդ յեռանդուն, աշխատող.
 մեր կարմիր աշխարհում հրածին
 նրանն ե ապագան լուսաշող:

ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՆՆԴԻ ՅԵՐԳ

Հեռու սարերին, մոտիկ դաշտերին
 Արևը վոսկի փռչի յե ցանել.
 Հասուն արտերում, դեղին հասկերի,
 Քամուց ալեկոծ մի դետ ե փռվել:
 Կոլխոզի արտում, են լայն հովիտում
 Ահել ու ջահել գործի յեն դիմում:

Ձեռները ուժեղ միաձույլ թափով
 Գործի յեն անցել դաշտում անսահման.
 Հասկեր կտրելով, շարքեր դարսելով
 Քայլում ե արագ հնձվոր մեքենան:
 Կոլխոզի արտում, են լայն հովիտում
 Ահել ու ջահել գործի յեն դիմում:

Պիոներական մի մեծ կոլեկտիվ
 Լայն դաշտն ե անցել ոգնելու համար,
 Ճկուն մատներով հասկերից անթիվ
 Խուրձեր կազմելու, դարսելու համար:
 Կոլխոզի արտում, են լայն հովիտում
 Ահել ու ջահել գործի յեն դիմում:

Թուխ-արեակեզ զվարթ դեմքերով
 Ողակ առ ողակ շարժվում են նրանք,
 Հնձին մասնակցում ուրախ յերգերով.
 Հմուտ շարժումներ, աշխատանք արագ...
 Կոլխոզի արտում, են լայն հովիտում
 Ահել ու ջահել գործի յեն դիմում:

Հեռու դաշտերում, մոտիկ ձորերում
 Հնչում ե յերգը պիոներական,
 Արևը վերից վոսկի յե ցանում
 Ժպտում են կապույտ դաշտից անսահման:
 Կոլխոզի արտում, են լայն հովիտում
 Ահել ու ջահել մեծ տոն են տոնում:

ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱԼՍԻԶԸ

I

Բացած վոսկե թևը,
Ժպտում ե արևը,
Ժպտում ե փերուզ յերկնքից...
Բայց մերկ են դաշտերը,
Հնձել են արտերը,
Խուրձեր կապել հասկերից:

Դաշտում նոր հանդես ե՝
Կալսում են մեծ դեղը,
Կալսում ե հսկա մեքենան.
Տրակտորը փնջում ե,
Կալսիչը տնջում ե,
Ցերախն ե իր լայն բացել նա:

II

Դողում ե գետինը,
Շարժվում ե անիվը,
Դարմանը մի կողմը դիզում.
Հսկա ատամները
Ծամում են հասկերը,
Ցորենը հասկից բաժանում:

Փոկերը վազում են,
Խուրձերը թռչում են
Դեպի յերախը հսկա...
Ցորենը թափվում ե,
Պարկերը լցվում են,
Ու մեկ ել- են դեղը չըկա...

III

Անցնում ե կեսորը,
Քայլում ե տրակտորը,
Դեղեր ե կալսում նա շարք-շարք:
Ուժեղ անիվները

Յեվ սուր ատամները
Դաշտեր կկալսեն շատ արագ...

Ու մերկ են դաշտերը,
Բայց լիքն են պարկերը,
Պարկերը վոսկե ցորենով:
Բացած փայլուն թևը,
Ժպտում ե արևը,
Անցնում ե փերուզ յերկնքով:

Գ. ՄԵՍՅԱՆ

ԲԵՐՔԻ ՏՈՆՆ Ե

Բերքի տոնն ե այսոր—
Կոլխոզի դեղին դաշտերում
Ծփում ե անափ մի ծով.
Հովը տանում ե, բերում
Արտերը վոսկե հասկերով:

Ու հասկերն այդ՝ վոսկեվարս՝
Նազանքով շորոր,
Կասես հագել են խաս՝
Ճեմում են այսոր:

Բերքի տոնն ե այսոր...
Մանգաղն ե փայլում արտում,
Տնքում են հնձիչն ու տրակտոր,
Դաշտերը մնում են տրտում
Ջարդերից զրկված այսոր:

Ու հնձած խուրձերը բարդ-բարդ,
Սայլերի շարանն ու տրակտոր
Քաշում են, ու յերգը զվարթ
Հնչում ե ուրախ այսոր:

Կալսիչի աղմուկն անընդհատ
Գյուղի ծայրերում բոլոր
Լսվում ե ու դիզվում վոսկեհատ
Կոլխոզի ցորենն այսոր:

Թմբուկով, պարով ու յերգով
 Զգվում ե կարմիր սայլաշար.—
 Կոլխոզն ե, անդրանիկ բերքով,
 Գալիս մերձակա կայան,
 Բերում ե քաղաքի համար
 Իր տուրքը, հարազատ յեղբոր,
 Ասելու բանվորին հիմա,
 Թե տես՝ նվաճումն իմ նոր,
 Մեր բերքի տոնն ե այսօր:

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԲԵՐՔԻ ՏՈՆԸ

Լուսաբացին—կարմիր շորով,
 Զուգված ջահել հարսի պես,
 Մարի յետքից շորոր տալով՝
 Արևն ելավ լուսերես:

Համբույր տվեց շաղին, հողին,
 Դեղնած ծառ ու դաշտերին,
 Վողջույն տվեց նա մեր գյուղին,
 Ու ջերմ բարե շատերին:

Զուռնի ձենը գեղը բռնել,
 Զիլ ծվում ե—տիր-նա-նի...
 «Շուտ վեր կացեք, ի՞նչ եք քնել,
 Ել մարդու քրան կտանի»...

— «Գործկում յեկեք, հենց, գործկում,
 Հավաքվեցեք մարդ ու կին,
 Թմբուկ զարկիր, ջան պիտներ,
 Զեն տուր, ձեն տուր ամենքին:

Բերքի տոնն ե: Մինչև կես ուր
 Ով ինչ ունի—թող բերի,
 Բերքի տոնն ենք տոնում հսոր,
 Առանց ժամ ու տերտերի»...

Դյուղը զարթնեց:—«Ե՛յ, բարի լուս,
 Ի՞նչ եք նստել սուս ու փուս.
 Կատարածուն կանչում ե մեզ,
 Բերքի տոնն ե, մեծ հանդես»...

Դյուղամիջում հարա-հրոց,
 Խաղ ու խնդում, ծափ-ծիծաղ,
 Բերք են բերել գոգնոց-գոգնոց
 Լցրած խախալ, լցրած մաղ...

— Ես խնձորը—նոր խնձոր ե,
 Ընկեր գործկում, համը տես.
 Հենց կասենաս մեղրի ծոր ե,
 Կեր, վոր դու յել պատվաստես:

— Ե՛յ, գեղական, է՛յ, ախպեր ջան,
 Ես ցորենին մտիկ արեք,
 Մա—ցորեն չի, լալ ա, մարջան,
 Ես սերմիցը—դուք ել տարեք...

— Պահ, հալա ես ճակնդեղին,
 Յեզան գլխից մեծ կըլի,
 Կոլեկտիվից նվեր գեղին,
 Սերմը տարեք լի ու լի...

— Մոտիկ արի, ա՛յ սանամեր,
 Ի՞նչ կա պահած եղ գոգիդ...

— Աբրեշումի վոսկե ծամեր...
 Նանը մատաղ ամենքիդ...

— Յորենի տեղ—վիկ ցանեցի,
 Ծաղր ու ծանակ շալակած,
 Ել ի՞նչ ասես, վոր չասեցին—
 «Գիժ ե, գիժ ե, անկասկած»:

Իսկ հիմի տես, են սարի պես
 Խոտ եմ դիզել—յերեք դեզ,
 Խոտն ել—խոտ չի, ա՛յլ արբեշում,
 Դիզել եմ ու քեֆ քաշում...

— Դե, գուռնաչի, գուռնեդ փչի,
 Եսոր տոն ա, բերքի տոն,

Ամուր դարկի, այ դհուլչի,
Թող պար բռնի ամեն տուն...

— Զան, տղերք ջան, մեռնի դուշման,
Մեր կոխողը թող ապրի,
«Գեղը կանգնի,— գերան կոտրի»,
Կուլակ, մնա քոռ-փողման...

III

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ ՅԵՎ ԱՐԹՆԱՑՈՂ

ԱՐԵՎԵԼԲ

ՅԵ. ԶԱՐԵՆՑ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ

1.

Աշխարհի կենտրոնը — Մոսկովիլն է,
 Մոսկովիլը Մեկկայից ել հինն է:
 Մոսկովիլից մեծ քաղաք — չիք:
 — Քանի վոր Մոսկովիլի միջին
 Ապրումն է ինքը —
 Լենինը:

Այ, Մոսկովում հենց եղ
 ապրումն է արխադաշ Լենինը:
 Նա, վոր մեծ է, վոնց վոր ամենամեծ խալիֆ:
 Սակայն ենպես խալիֆ,
 վոր հասկանում է միշտ ֆուխարայի հալից:

Այս է պատճառը հենց,
 վոր սիրում է նրան տրապիզոնցի Ալին:

Թիավար է Ալին մի նավակի վրա:
 Ստանում է ամիսը —
 Յերեք ու կես լիրա:
 Աշխատում է սակայն առավոտից գիշեր:
 Ու սիրում է նրան
 տերը, վոնց վոր գրաստ,
 քշել,
 քշել:
 Սիրում է Ալին Լենինին:
 Նրա մասին նրան
 պատմել է նավաստի մի ոռու:

Յուշը ե տվել նրան
պատկերքը Լենին.

ասել ե.

— Լենին — կառույ:

Ալին ասել ե.

— Չոկ:

Ուռուսն ասել ե.

— Յո.

Լենին վար—

բուրժուայ յոկ:

—
Բուրժուայ—այսինքն գանգին,
այսինքն եֆենդի, աղա,
են, վոր նստում են հանգիստ,
ուտում են ուրիշի քրտինք
ու սիրում են

միշտ

ծովափին

նստել նարդի խաղալ:

Հասկացել եր Ալին.

«Լենին—

բեյուկ խալիֆ»:

«Բեյուկ խալիֆ» սակայն,

վոր հասկանում ե միշտ ֆուխարայի հալիֆ:

Ու սիրում եր նրան,

եդ Լենինին հեռու

իր հարձաղի սիրով տրապիզոնցի Ալին.

2.

Այդ որը սուգ եր Մոսկովում.
վորբացել եր վոնց պրուետարը:
Ով վոր մոտ եր նրան—
արդեն գիտեր՝

— Ել չկա Կարմիր Ղեկավարը...

Փակել եր աչքերը Ղեկավարը,

վոր կյանքում չբանա ել բնավ:

Քնել եր Ղեկավարը

Անզարթնելի քնով:

Եդ որը ամեն պրուետար
Մոսկովում, Բագովում, Թիֆլիսում
չինել եր իր կամքը—բետոն
ու հողին—չուգուն.

պողպատել եր կամքը, վոր եզուց
կորուստի տեղ են թանդագին՝
կուռ՝

դնե բյուրմկան մի բռունցք

վոսոխի բկին:

3.

Յերեկո յեր:

Մութ ծովափով

գնում եր Ալին դեպի տուն:

Ու տեսավ հանկարծ ծովափին

իր ծանոթ նավաստուն ուս:

Մոտեցավ,

վոր ասի սալամ,

սեղմի ձեռքը՝ ծանոթ վոնց վոր հին,

ու կամաց փսփոսա նրան՝

«—Կարաշո Լենին»:

—
Մոտեցավ:

Տխուր եր նավաստին:

Անծանոթ եր դեմքը: Անոգ:

—
Ու հասավ մշտական «ղրաստի»-ն:

Այլ—

կամաց—

«Ալի, Լենին յոկ»:

—
Ել վոչինչ:

Հեռացավ:

Ու թվաց թե

լեռնացած՝ դարկեց մի ալիք:

—
Հասկացավ խոսքերի եդ իմաստը
նավաստի Ալին...

4.

Գիշեր ե:

Քնել ե Տրապիզոնը:

Զի հաջում անգամ մի շուն:

Վոստիկանը, սակայն, վոնց վոր շունը—
արթուն ե.

հսկում ե փողոցում:

Սըթսըթում են սև սոսիները,
փսփսում են վոնց վոր խավարին,
վոր թեկուզ Տրապիզոնը քնել ե,
բայց ահա—արթուն ե Ալին:

Գողեգող գնում ե Ալին

պատերի տակով դեպի մութը:

Գողեգող գնում ե Ալին

դեպի հւր.—

— Լոկ ինքը գիտե:

Մոտենում ե ահա կամացուկ

մի շնքի...

ցուցանակ կա ենտեղ մի ծուռ...

նկարած ե վրան—

ՄԱՆԳԱՂ ՈՒ ՄՈՒՐԺ...

Կոչվում ե շնքը քաղաքում—

«ԿՈՆՍՈՒԼԱՏ ՌՈՒՄ»:

Մոտենում ե Ալին, վոնց վոր գող:

Անցնում ե մոտից վոստիկանը:

Սահում ե Ալին կողքով—

մոտենում ե դռանը:

Սեղմում ե դանգը:

Զանգից սակայն զիլ

խոր լուծթյան մեջ

զարկում ե

մի սիրտ:

Բացվում ե դուռը:

Մտնում ե ներս:

Լոկ պահապանն ե,

վոր արթուն ե դեռ:

Նա ճանաչում ե

կարգաշ Ալուն.

հաճախ գնացել են մեկտեղ լողալու:

Բայց արդեն գիշեր ե:

Ուշ ե արդեն:

— Ի՞նչ ե հարկավոր Ալուն արդյոք:

— Կոնսուլ...

— Խմ-խմ...

— Գիշեր ե:

— Ուշ:

Բայց բախտից Ալուն—

հյուպատոսն հանկարծ յեկնում ե դուրս:

— «Լինին յո՞կ»,— հարցնում ե Ալին:

Լուծթյուն:

Վոնց վոր մուրճ՝ տաշող:

Ու—

Յեվ կրծքին խփելով Ալին՝

մրմնջում ե.

— Նեթ կարաշո...

Յեվ ապա, նայելով դետին,

մի բանից վոնց վոր վախելով՝

ասում ե՝ դառնուծթյամբ լի.

— «Ալի, պլոխ: Ալի—աղլիոր»...

Խոնարհում ե գլուխը գեթին,

անխոս վիշտ ե հայտնում ու

պատիվ—

և—

հեռանում ե՝ քսվելով պատին...

Ուրիշ ի՞նչ:

Վոչինչ:

Խնդալու

կամ լալու կարծեմ պատճառ չիք:

— Վողջոյն արխաղաշ Ալուն:

— Հաղթանակ գործին ԻՄիչի:

Ռ. ԱՂԱԲԱԲ

ՆՎԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ

Հաղար վողջույն

Անգլիական

Ընկերներին՝

Ձեկին, Ջոնին,

Վոր յեկել են

Ձեմբերինի

Մահի յերկրից,

Հաղար վողջույն:

Մեր գրկաբաց

Այս նոր յերկրում,

Դուք տեսել եք

Կյանքը յեռուն,

Դուք տեսել եք

Աշխատանքը՝

Մեր շինարար,

Ույժը. կամքը

Միլիոնավոր մասսաների

C. C. C. P.-ի.

Այդ պատմեցեք

Միստերներին:

Դուք տեսել եք

Մեր բանվորին

Դործարանում,

Կամ թե ազատ

Իր հարազատ,

Ակումբներում,

Կուրորտներում

C. C. C. P.-ի.

Այդ պատմեցեք

Ձեր հայրերին,

Ձեր մայրերին:

Ու պատմեցեք

Թափի մասին մասսաների---

Սասանելի,

Վոր կարող ե հիմքից շրջել

Ձեմբերներին.

Այդ պատմեցեք

Դուք հենց իրեն

Մեծ միստերին,

Վոր այդ մասսան

Մեր Մոսկովից,

Մինչև Լոնդոն,

Մինչև Բերլին

Դեմ ե կանգնած Ձեմբերներին:

Ու կոչ արեք

Ձեր պիոներ

Ընկերներին՝

Պատրաստ լինել,

Կամքով զինվել:

Դիրքեր հիմնել:

Հաղար վողջույն

Անգլիական

Ընկերներին՝

Ձեկին, Ջոնին,

Վոր յեկել են

Ձեմբերներին

Մահի յերկրից,

Հաղար վողջույն:

ԵՄԻ ՍՅՈՒՅՈ

ԲԱՄԲԱԿ

Գեղջուկը ցանում ե բամբակ,

Ու քնքուշ բերքը հավաքում,

Բամբակի քուլաները դգում,

Չորացնում, մաքրում են քաղաքում,

Ստացվում ե մաքուր բամբակ:

Յեւ թրտինքն այդ, և բամբակն այդ
Միայն հարուստին և պատկանում:
Գեղջուկը բամբակ և հասցրել,
Դաշտերը շաղել թրտինքով,
Ու հետո բամբակն այդ ընկել և՛
Չան-Կայ-շու ձեռքը նենգավոր:

Բամբակը բաժանել և զոլ քերին,
Գնդերին. վաշտերին և բաժանել,
Վերցրել և բամբակը՝ Չան-Կայ-շին,
Խոթել և զորքի ականջները:

Ծիծաղելի յե խոսել այդ մասին,
Գեններալներն ու Չան-Կայ-շին,
Խորհուրդներն ուզում են ջնջել,
Վերջ դնել բանակին կարմիր:

Բայց գեղջուկները կարմիրների հետ են,
Ոգնում են նրանք՝ կռիվներում,
Բանվորի-գյուղացու բանակին:

Կարմիրները սպիտակներին քշում են՝
Սպիտակները ահից ել սպիտակում են,
Ամենից ահավորն և ամեն կովում,
Յերբ զինվորները ֆրոնտը թողնում են,
Անցնում դիրքերը կարմիրների.
Վոչ մի խստությամբ նրանց չես պահի,
Կարմիրների կոչը ուժեղ և, արի:

«Յեկեք—կանչում և նա,—յեկեք մեզ մոտ,
Կորչի տուխառն, վերջ տանք ջնադրներին,
Հողը չքավորին.
Հեյ, զրնվորներ,
Ձե՛ վոր դուք գյուղացիներ եք:

Կորչեն կոմպրադորները, խփեք նրանց,
Ամեն տեղից խռկեք, քշեք հեռու,
Կառուցենք մեկտեղ, խրոխտ խորհուրդներ,
Հեյ զինվորներ.
Ձե՛ վոր դուք բանվորներ եք»:

Ասում և Չան-Կայ-շին՝ զինվորներին.
«Բարձրաձայն ճայթում են գրանատները,
Շրապնելը ոգն և թնդեցնում,
Բարեկամ զինվորներ, պաշտպանեցե՛ք՝
Թմբկաթաղանթները ձեր ականջի:
Նախ քան կռիվը, բարեկամներ իմ,
Բամբակ խրեցեք ձեր ականջները»:

Գեղջուկը ցանում և բամբակ,
Ու հետո բերքը հավաքում,
Բամբակի բերքը գզում,
Չորացնում, մաքրում են քաղաքում:

Ստացվում և մաքուր բամբակ,
Յեւ թրտինքն այդ, և բամբակն այդ
Միայն հարուստին և պատկանում:

— Յեւ հարուստները բամբակովն այդ,
Լավ փաթաթում են կոմունիստին,
Բամբակի վրա լցնում բենզին,
Լուցկի, բռնկում, մեն մի վարկյան,
Յեւ աշտեղ, ուր կյանք եր թպրտում՝
Մոխիրն և այժմ սառչում անկյանք,

Ահա այսպես ընկավ, սիրելի բարեկամ,
Մտերիմ ընկերն իմ Չոու-Դան,
Կոշտ և լեղուն իմ, լեղուն իմ աղքատ և,
Ինչպե՛ս հաղորդեմ ձեզ զայրութն իմ վառ:

Ո՛ր, սպիտակ բամբակ, անմեղ բամբակ,
Ո՛ր, դառը բենզին, ո՛ր, ջուր դու չար,
Ո՛ր, աղքատ գեղջուկ՝ բամբակացան,
Ո՛ր, սիրելի ընկեր Չոու-Դա:

Բամբակն աճում և,
Ժամանակը հասնում.
Լսիր ու հիշիր անիծյալ դահիճ,
Յերկար չի ոգնիլ բամբակը բնօրու,
Գալիս և որը՝ հաշվեհարդարի:

Թարգմ. Ռ. Աղաբաբ

Ս Ա Մ Ի

(Ըստ Ն. Տիխոնովի)

I

Սամիի սայիբը¹⁾ խելոք է,
Բայց ականջից ուժգին է քաշում.
Սամիի սայիբը խելոք է,
Յեւ Սամունհա մարդ չի հաշվում:

Խեթ աչքով է նայում նրան,
Ու «ապրես» յերբեք չի ասում.
Սամին թամբում է նրա ձին
Թրաշի փրփուր է պատրաստում,

Սապնե փոշին ափել է մի քիչ,
Սայիբն իմաստուն է, քան Վիշնի²⁾,
Կիմանա, ու Սամու յերեսին
Նրա թեժ ապտակը կիջնի:

Սամիի հայրը իզուր չէր
Բեջապուրում³⁾ վազող յեղել⁴⁾,
Տղան եւ վազում էր բաղարում
Սայիբին միշտ հլու տարիներ...

II

Այդ տարին յեղավ շատ չափ,
Սև բոռը խայթեց Սայիբի պոնուն⁵⁾
Յեւ չար վոգին հանկարծ
Վռնաց Սայիբի տելեֆոնում...

Գոնդը⁶⁾ զնգում էր. — լրագիր.
Սայիբը կանչեց. — Սամի, գնիր.

1 Սայիբ — պարսն՝ հնդկական լեզվով: 2. Վիշնի կամ Վիշնու — հնդկական գլխավոր աստվածը: 3. Բեջապուր — քաղաքներն են Հնդկաստանում: 4. Վազող յեղել — Հնդկաստանում կան վազող մարդիկ, հանձնարարութուններ արագ կատարելու համար: 5. Պոնի — ջորու մի տեսակն է: 6. Գոնդ — զանգի փոխարեն գործածվող իր:

Բայց զարմացավ յերբ իր կանչին
Վոչ պատասխան կար, վոչ Սամի...

Թրաշի համար թասիկը
Նա տվեց տաքացնել ուրիշին...
Ու ինչեր չեղան այդ ուրը.
Առանց կեր հանդ գնաց նույնիսկ ձին:

III

Յոթն ուրից հետո դարձավ Սամին.
Ինչպես մի գառնուկ ծեծված,
Յերեսը, ձեռները չանգոտված
Ու շորերը մաշված, քրքրված:

Ճակատին մի ուռույց կոշտ, կապտած
Փայլում էր վորպես կնիք,
Մոտեցավ. աչքերը լուրթյամբ
Թաքցնում էին մի գաղտնիք...

— Ո՞ւր եյիր, էյ, անպոչ դու կապիկ.
Վորոտաց սայիբը տեղից.
Ու Սամին կանգնելով, համարձակ
Սայիբին պատասխան տվեց.

— Շատ եյի վախենում քո ծեծից,
Ուղեցի դնալ գանդատի
Նրա մոտ, վոր բարձր է բրամինից,⁷⁾
Բայց ընկա անապատն ավազոտ,
Մոլորված վորպես կույր մի կատու...

— Հա, հա, հա, գանդատի, սրան տես,
— Դու ծնվել ես՝ հնազանդ լինես,
Վաղես փոստ ու նայես իմ ձիուն,
Վաղ դարթնես, պատրաստես ջուր, թասիկ.
Յես քո տերն եմ, լսում ես, էյ կապիկ...

IV

— Նա ապրում է հեռուն ձյունապատ,
Լեռներից այն կողմը հյուսիսում.

7. Բրամին — բարձրաստիճան հոգևորական Հնդկաստանում:

Քաղաքում աղմկող մարդաշատ,
Նա բարի հայր Լեւին և կոչվում:

Քաղցածին նա հաց և տալիս միշտ:
Թե ուղի՝ դայից մարդ և դարձնում.
Նա չար ու դաժան սայիբ չի,
Վե՛ր ծեծում, վե՛ր ահանջ և քաշում:

Իր ցեղը թող լինի աննշան,
Ասում են չի նայում նա ցեղին,
Խորհուրդներ կտա շատ աննման,
Վոր արժեն վոսկիներ վառ դեղին:

Ու Սամին Լեւինից շատ շատ բան
Կիմանա՝ իմաստուն կլինի.
Մի որ ել կդառնա հաղթական,
Սայիբներին բոլոր կսպանի:

Հնդկաստանից նա կքշի նրանց,
Շատ հեռու, մեծ ծովից ել դեն,
Կազատի յեղբայրներին իր բոլոր,
Զի թողնի սայիբները տանջեն...

V

— Ո՞վ ասաց այդ բանը բեզ, թշվառ,
Վախեցավ չարասիրտ անգլիացին.
— Ո՞վ.— ժպտաց Սամին թունալից.
Արմիտսարի բաղարում, այնտեղ,
Ուր «սպիտակը»⁸⁾ չի գնում վախից՝
Խանութպանն այդ բոլորն ասաց ինձ:

Խանութպանը դիտե ամեն բան,
Նա գիտե ապրանքի ճիշտ գինը,
Թե ինչեր են լինում աշխարհում
Ու վորքան խելոք և Լեւինը...

8. «Սպիտակ» — անգլիացի. հնդիկները նրանց այսպես են կանչում:

— Դուրս կորի — վորոտաց անգլիացին.
Ու Սամին հեռացավ ժպտալով.
Իսկ սայիբը փակվեց սենյակում.
Նրա սիրտը լցվեց նոր ասով...

VI

Աղոթում և Սամին ծնկաչոք,
Նա փոքրիկ և, խաղաղ ու լուռ ու վեհ,
Աղոթում և Լենինին հեռավոր,
Վոր անհաս և, հեռավոր Իոզի⁹⁾ պես:

Խնդրում և, վոր լսի իր փոքրիկ
Աղոթքը քաղաքում իր անհաս,
Թոչունն ուր շատ անգամ չի հասել,
Զի հասել դեռ և վո՛չ մի յերազ:

Վոր գծերն յերկաթի փշացնի,
Կրակ-փիղ¹⁰⁾ անդունդը գլորի,
Ալիքները հակա խորտակեն,
Ծուխ շնչող հրեշներն մեծ ծովի¹¹⁾,
Վոր հեռու աշխարհից ել յերբեք
Սայիբներ չարասիրտ չբերեն:

VII

Խնդրում և յերեխան ծնկաչոք,
Արցունքներն իր խոշոր աչերին.
Հեռու յեր, շատ հեռու Լենինը,
Բայց լսեց նա խկույն Սամին:

...Թվում և, թե ժպտում և ահա
Լենինը հայացքով բարի:
— Ասում և, — Սամի, սովորի,
Սայիբներից Հնդկաստանն ազատի...

9. Իոզ — իմաստուն, փիլիսոփա: 10. Կրակ-փիղ — Սամին ուզում
և ասել յերկաթուղի: 11. Ծուխ շնչող հրեշներ — շողենավեր:

Թվում է, թե ծնվել է նորից,
Մանուկ է Արմիստար քաղաքում.
Ու չկան սայիւրներ ել յերեւոյ,
Վոչ ծեծում, վոչ աղանջն են քաշում:

Փոխադրեց՝ Շ. Ազնաւուրյան

ՓՈՔՐԻԿ ՎԱՆ-ԼԻՆ

Հեռու մեզնից, շատ հեռու, հեկյ...
Ուր աճում են բամբուկ ու թեյ,
Մի դավառում Զինաստանի
Ապրում եր մեր փոքրիկ Վան-Լին:

Սէքերը նեղ, ճեղքեր, ասես,
Նայում են շեղ ու բարկացած.
Իսկ մագերը՝ փշերի պես,
Մեջքից ծամով իջնում են ցած:

Հազար հեռու կայարանից
Գնացքներ են գալիս արագ.
Ոտարներ են—գալիս են Զին,
Շատ ծանրոց են բերում նրանք:

Հայրը բանվոր է Վան-Լիի,
Կորացել է բեռը մեջքին.
Որ ու գիշեր դադար չունի՝
Բեռն է կրում—գինը՝ չնչին:

«Դե, շուտ արա, քնած ես դժն»
Գոռում են խիստ—ապա հարված.
Կտրատվում է մեջքն ու թիկունք,
Ծեր Լի-Մինի մեջքը հոգնած:

Յեւ ռզնում է հորը Վան-Լին.
Արցունքներն են քրտինք, ասես,

Իր ուժից վեր բեռը մեջքին՝
Վորտեղ վոր է, կընկնի հրես:

* *

Վան-Լին նեղվում է, բարկացած,
Վոր ծանր է խիստ աշխատանքն իր,
Մանդարիններ շքեղ զուգված՝
Սրճարանի բարձրույթներին:

Ու սանդուղքից նայում է խեթ,
Նեղ ճեղքերից աչքի, Վան-Լին.
Դեպի վերեւ, բարձրույթը դեպ,
Բարձին թիկնած գոհ դեմքերին:

Ամեն ինչ կովով է մեր կյանքում,
Ել ուրիշ չես գտնիլ մի ճամբա.
Ու Վան-Լին փոքրիկ բոյ*) է դառնում՝ մի ծառա:
Իր վարձի փոխարեն ստանում
Կես աման բրնձն ուտելիք:

Մեծանում է Վան-Լին, նիհարում,
Շատ դիշեր չի կարում թե քնի:
Իսկ տերն իր—մի հրեշ կատաղած,
Միշտ մռայլ. վերջ չունի փողերին.
Ծախսում է, շարտում ձախ ու աջ—
Որն ի բուն վոտքի յե բոյ Վան-Լին:

«Վազիր շուտ ամանները լրվա,
Լսում ես, քեզ հետ եմ, եյ, հիմար,
Գոռում է տիրուհին անխնա,—
Թե չես այ, բռունցքը քեզ հիմա»:

Ու կյանքից հոգնել է նա եսոր,
Տանջել են Վան-Լինն ենքան,
Իսկ առաջ հավատում եր, վոր
Աղոթքն իր կլսի Բուդ-հան:

*) Բոյ — ծառա:

Բայց կուռքն այն քարե, անհողի,
Զի ոգնեկ դեռ յերբեք վոչվորի.
Ու կրում ե փոքրիկն իր սրտում
Անարգանք ու ճնշում:

—
Սակայն լսել ե Վան-Լին,
Վոր կա մի աշխարհ հեռու,
Ու եղ աշխարհում հիմի
Ամեն ինչ լավ ե, սիրուն:

Զկա մանդարին, ուր վոր
Վոչ ել ծեծում են բոյեիմ.
Զոկ կյանք ու որենք ե տիրում,
Նման չի իրենց յերկրին:

Ու հոգնած Վան-Լին իր մեջ
Գաղտնի շոյում ե մի տենչ—
«Հասնեմ յերկիրն այն վոտքով»:

Ու աշնան մի գորշ որ,
Լավում ե թմբկահար—
Պատկոմներ՝ շարե-շար,
Զարկում են համաչափ
Վոտքները ամուր,
Զեռն ու մեջքը կուռ,
Յերկար շարքերով,
Լուրջ-լուրջ դեմքերով:

—
Իսկ կողքից քայլող
Նիհար, սևահեր,
Դեղին ա յտերով
Պատկոմն են հավ ե,
Վոր աշխատում ե
Հասնել իր շարքին՝
Փոքրիկ քայլերով
Փոքրիկ չինացին:

—
Թե վհնց ե Վան-Լին
Մեր Խորհրդային
Յերկիրը հասել,

Լավ ե եղ մասին
Հենց ինքը ասի:

—
Բայց ով ուզենա
Մեր յերկիրը գալ՝
Հաղար ճամբա կա
Հասնելու համար:

—
Ազատ ենք այստեղ ապրում,
Ազատ, ու կյանքով մի նոր.
Մի նոր տենչ ե կրում
Իր մեջ Վան-Լին եսոր—
Թե վհնց, յերբ պիտի նա
Յետ գա յերկիրն իր հին,
Կարմիր զինվոր դառնա՝
Փրկի Զին ու Մաչին:

Թարգմ. Գ. Մեսյան

Յերկու խոսք	3
-----------------------	---

I.

Հոկտեմբերյան Հեղափոխություն, Բախաճակիական կռիվներ

1. Ինտերնացիոնալ	7
2. Հ. Հակոբյան—Մեռան՝ չկորան	8
3. Գ. Մեսյան—Կարմիր «Հոկտեմբեր»	9
4. Յե. Չարենց—Ընկերները	10
5. Հ. Հակոբյան—Քսանովեց եյին	11
6. Ն. Չարյան—Քսանովեցը	12
7. Խ. Մատինյան—Իմն ե այս տոնը	14
8. Գ. Մեսյան—Մեծ Հոկտեմբերին	14
9. » Շողում են դրոշները բյուր	15
10. Վ. Նորենց—Տարեգարծի յերգ	16
11. Գ. Մահարի—Վոդջույն Նոյեմբերին	17
12. Լ. Մեհրաբյան—Կարմիր պահակ	17
13. Ն. Չարյան—Կարմիր բանակայինի վերադարձը	19
14. Գ. Գրիգ—Մայրը	19
15. Յե. Չարենց—Այս գարունը	21
16. Գ. Մեսյան—Փոքրիկները «Մարտի 8-ին»	22
17. Հռիփսիմե Աշխաբագի—Այ նանի	23
18. Մ. Դարբինյան—Մարտի 8-ը	24
19. Գ. Մեսյան—Մայիսյան Տոնին	25
20. Արագի—Կարմիր բառիկագ	27
21. Գ. Մեսյան—Փարիզյան կոմունան	27
22. Հ. Հակոբյան—Վ. Ի. Լենին-ին	29
23. Յե. Չարենց—Լենին	29
24. Յե. Չարենց—Չուգունե մարդը	31
25. Գ. Մահարի—Լենինի արձանի մոտ	32
26. Գ. Մեսյան—Լենինի պատկերը	32
27. Յե. Չարենց—Մահվան քայլերգ	36
28. Հ. Հակոբյան—Ստեփան Շահումյանին	37
29. Յե. Չարենց—Բորիս Զնեկաձե	38

II

Սոց-սինանաւորութիւն, նոր կենցաղ

30. Մ. Դարբինյան—Հարվածայինները	43
31. Սարգիս Մանուկյան—Պատկորը	43
32. Ռ. Աղաբաբ—Յերգ ուժի մասին	44
33. Վ. Գրիգորյան—Տուֆի յերգը	45
34. Ռ. Թ.—Յերկաթուղին	47
35. Դ.—Ուրիշ և հիմա	47
37. Մ. Նարյան—Աշխատանքային	49
38. Հ. Աղաբաբ—Լենին (մանկ. խաղ)	49
39. » » Մայիսյան խաղ (պատիկ պոեմ)	56
40. Հ. Պողոսյան—Գիգանտների և կառուցման մասին	58
41. Ալազան—Նուշիկին	60
42. » Փարոս	60
43. » Առավոտ	61
44. Հ. Պող. (փոխ.)—Նոր կենցաղը	62
45. Գեվորգ Խալաթ—Գոմարմուխա	64
46. » » Մազնիտոգորակ	65
47. Հ. Նորայր—Կոլխոզնիկ մորս	65
48. Գ. Սարյան—Գարնանային	66
49. Գ. Մեսյան—Գարուն	67
50. Ս. Դուր—Պիոներական յերգ	68
51. Ռ. Աղաբաբ—Լազերի յերգը	69
52. Գեվորգ Գրիգ—«Հիմի մեծ եմ, չե՞...»	70
53. Յե. Չարենց—Մի հոկտեմբերիկի	71
54. » » Գանգրահեր տղան	72
55. Յերգ պիոներ Արրոսիմովի մասին	74
56. Հոկտեմբեր	75
57. Միւրաք Միւրաքյան—Հոկտեմբերիկին	76
58. Չորս սերունդ	77
59. Պիոներ թմբուկը	78
60. Գ. Մասլոժ—Նոր սերունդ	78
61. Հ. Պողոսյան—Ջնձի յերգ	79
62. » » Կալսիչը	80
63. Գ. Մեսյան—Բերքի տոնն և	81
64. Մ. Դարբինյան—Բերքի տոնը	82

III

Իմպրիալիզմ ընդ արքնացող Արեւիկ

65. Յե. Չարենց—Լենինն ու Ալին	87
66. Ռ. Աղաբաբ—Նվեր անգլիական պիոներներին	92
67. Եմի Սյուր—Բամբակ	93
68. Ըստ Ն. Տիխոնովի—Սամի	96
69. Փոքրիկ վան-Լին	100

9/111 2 п. 50 4.



4

Ю н ы й Ч т е ц

Сборник стихов

(На армянск. яз.)

Составили: М. ДАРБИНЯН, Г. МЕСЯН и Р. ПОГОСЯН

Издание Госиздата Грузии
ТИФЛИС — 1934 г.

ՀՀ Ազգային գրադարան



NL0395978

8184

H a r m
H 3-1218a

44-3-2